

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԿԸ ՉԵՐՔԷ ԱՅՂԱՆ ՉԵՐԲԱԿԱԼԵԱԼՆԵՐՈՒ ԽՈՇՏԱՆԳՈՒՄԸ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ, 12 (ՌՈՅԹԸԸՁ).- Միացեալ Նահանգներու պիտոյութեան ղեկավարութիւնը հերքեց այն տարածայնութիւնները, որոնց համաձայն՝ ամերիկացի պիտոյութեան անդամները անհարաւային Աֆղանիստանի մէջ խոշտանգած են աֆղան ձերբակալեալներ, նախքան անոնց հարցաքննութիւնը, ապա ազատ արձակուիլը:

Օղոմի հրամանատար Կոր. Ռիչըրտ Մայրըզ մասնաւորապէս անդամակցեց ընդունիլ նման անբարեխափանքները: «Ուաշինկթըն Փոսթ» օրաթերթը Երկուշաբթի օր հարդորած էր, թէ աֆղան 27 ձերբակալեալներ, որոնք ազատ արձակուեցան անցեալ Չորեքշաբթի, նախքան իրենց ազատ արձակուիլը խոշտանգուած են, եւ թէ անոնցմէ երկուքը սաստիկ խոշտանգուած ընթացքին կորսնցուցած են իրենց ուշքը: Չոր. Մայրըզ յայտնեց, թէ այս գծով հետաքննութիւնը կը շարունակուի:

ԱՄՍԱՆԻ ՄԷՋ

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ԱՊՏԱԼԼԱ Բ.Ի ՀԵՏ

Վարչապետ Ռաֆիք Հարիրի երէկ միտրեալ այցելութիւն մը կատարեց Յորդանան, ուր մայրաքաղաք Ամմանի մէջ տեսակցութիւն մը ունեցաւ Ապտալա Բ. թագաւորին հետ, «Պէյթ Պարաքա»ի մէջ: Հարիրի ապա ժողով մը գումարեց նաեւ յորդանանցի իր պաշտօնակիցին՝ Ալի Ապու Ռադէպի հետ:

Վարչապետը նախագահ Լաիուտի ողջունեց փոխանցեց Ապտալա Բ.ի: Քննարկուեցան երկու երկիրներու յարաբերութիւնները, շրջանային հարցեր՝ պաղեստինեւիսրայելեան վերջին իրադարձութեան լոյսին տակ, ինչպէս նաեւ արժարձուեցան արաբական վեհաժողովին առընչուող խնդիրներ: Երկու ղեկավարները յոյս յայտնեցին, որ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատ, որ իսրայելեան ուժերու կողմէ 15 Դեկտեմբերէն ի վեր շրջափակուած կը մնայ Ռամալլայի մէջ, ներկայ կը գտնուի վեհաժողովին:

Վարչապետ Հարիրի անգամ մը եւս հաստատեց, որ Լիբանանի մէջ պիտի գումարուի այս վեհաժողովը, ճշդուած թուականին:

ԱՆՆՆԵՐ

ՍԼՈՊՈՏԱՆԻ ՄԻԼՈՇԵՒԻՉԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՍԿՍԱԻ



Միլոշեւիչ՝ դատավարութեան ընթացքին միջոց ալ սառնասրտութեամբ ունկնդրեց իրեն ուղղուած ամբաստանութիւնները:

Սլովոտան Միլոշեւիչ Պալաքանեան շրջանի տարածքին սպանութեանց, չարչարանքներու եւ տեղահանումներու արշաւներու ետին կանգնող ուղեղը եղած է՝ անոր իշխանութեան արիւնալի մէկ տասնամեակին ընթացքին, յայտնած են դատախազներ երէկ Եւրոպայի պատերազմական ոճիրներու կապուած 50 տարուան մեծագոյն դատավարութեան բացումին առիթով:

Եւրոպայի իրաւապաշտպանութեան ներկայութեան, անոնք Լա Հէյի Միջազգային Ոճրագատ Ատեանին դատաւարներուն յայտնած են, թէ Միլոշեւիչի պիտի պարտադրուի առաջին անգամ ըլլալով դէմ յանդիման գտնուիլ իր զոհերուն հետ:

Գլխաւոր դատախազ Քարլա Տէլ Փոնթէ յայտնած է. «Կարող մը դէպքերու գծով յայտնաբերուած են գրեթէ միլիոն դարձուած վայրագութիւն եւ դիտումներ, որոնք օրինակաւ պատերազմի հասկացողութեան շատ աւելի անդին կ'երթան:

Ան խոստացած է, որ զինուորական եւ քաղաքական բարձրաստիճան անձնակազմները վկայութիւն պիտի տան Միլոշեւիչի դէմ, աւելցնելով, թէ անոնք պաշտպանութեան պէտք պիտի ունենան՝ Բ. Ալիարհամարտէն ետք նացիներու դէմ դատական հետապնդումներէն ի վեր Եւրոպայի մէջ պատերազմական ոճիրներու մեծագոյն դատավարութեան անոնց մասնակցութեան համար:

Իրուսթինոյ, Պոսնինոյ եւ Բոսնիոյ տաղանայներուն ընթացքին առնուազն 10 հազար հոգի սպաննուած, հաշմանդամ դարձած կամ վիրաւորուած է եւ աւելի քան մէկ միլիոն հոգի բանտարկուած է կամ՝ տեղահանուած:

«Այս ատենանը, եւ յատկապէս այս դատավարութիւնը, ամէնէն ուժեղ կերպով ցոյց կու տան, թէ ո՛չ ոք օրէնքէն վեր է կամ միջազգային արդարութեան հասողութեան անդին», շեշտած է ան:

Դատախազութեան գլխաւոր նպատակը փաստելն է, թէ Միլոշեւիչ, որ անդադար կ'արձանագրէր ըստ անոնց, երբ ամբաստանութիւնները կը կարգադրէին, այդ դէպքերուն «կեղծութիւն» կը գտնուէր՝ իբրեւ Սերպիոյ, ապա Եւրոպայի ղեկավար:

ԲՐԻՏԱՆԻՈՅ ԵՒ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԸ ԱՅՍՕՐ ԵՒ ՎԱՂԸ ԿԸ ԺԱՄԱՆԵՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԸ

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՇՐՋԱՆՆԵՐ ՆԵՐԽՈՒԺՈՒՄՆԵՐԸ



Իսրայելեան հրասայլ մը կը ցերխուծէ Նապլուս, մինչ պաղեստինցիք կը դիմարեցն քարերով...

Իսրայելեան ուժերը երէկ ալ շարունակեցին պաղեստինեան գիւղեր ու քաղաքներ ներխուժելու գործողութիւնները՝ մէկ հոգի սպաննելով եւ 12 հոգի ձերբակալելով: Իսրայելեան բանակը գործողութիւնները կը շարունակէ անտեսելով ամերիկեան քննադատութիւնները:

Իսրայելեան ուժերը ծայրայեղականներ ձերբակալելու նպատակով ներխուժեցին Այսրյորդանանի Հեպրոն եւ Ռամալլա քաղաքները, կազմաւորուեցան քանի մը ժամ ետք: Կազմաւորութիւնները ու այսրյորդանանեան քաղաքները ներխուժումը իսրայելեան հակադարձութիւններ են Համասի գինեալ թեւի կողմէ «Քասսամ - 2» ձրթիւն գործողութեան: Համաս կիրա-

կի օր արձակած էր հրթիռներ իսրայելեան հողերու վրայ, ուր սակայն վնասներ չէին արձանագրուած:

Պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատ դատաւարտեց իսրայելեան բանակին միջոցառումները: Արաֆատ, որ կը խօսէր Ռամալլայի մէջ, ուր արգելափակուած է Դեկտեմբերէն ի վեր, ըսաւ, որ պաղեստինեան իշխանութեան կառուցներուն ու հաստատութիւններուն եւ մինչեւ իսկ բանտարկուեցան դէմ ոճիրները կը շարունակուին: Մակայն պաղեստինցի ղեկավարը շեշտեց, որ ունի մէկ կը եւ որեւէ բան չի կրնար պարտութեան մատնել Պաղեստինի ժողովուրդը:

Իսրայել կ'ըսէ, որ «Քասսամ 2»-ի գործողութեամբ Համաս կ'ողգէ վախ ու սարսափ մթնոլորտ մը տարածել հրթիռական պետութեան սահմաններէն ներս՝ աւելի արիւնալի ու մահացու հանգրուան մը բանալու համար պաղեստինեան իսրայելեան տաղանային մէջ: Համաս իր կարգին կ'ըսէ, որ իրաւունք ունի որեւէ գէնքի տիրանալու՝ կարենալ դէմ դնելու համար իսրայելի գերակայ ուժին:

Բանակը յայտնեց, որ երէկուան ներխուժումին սպաննեց պաղեստինցի մը, որ կրակ բացած էր զինուորներուն վրայ Հեպրոնի հիւսիսը գտնուող Հալուլ գիւղին մօտ: Պաղեստինցի պաշտօնատար մը ըսաւ, որ գոհը պաշտօնակցութեան ուժերուն մաս կը կազմէր եւ թէ ան սպաննուեցաւ, Շարը՝ էջ 10

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆ

ՇԵՒԱՐՏՆԱԾԷ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆԸ

Վրաստանի նախագահ էտուարտ Շեւարտնաձէ երէկ ընդունեց Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանի գլխաւորած պատուիրակութիւնը, որ պաշտօնական երկօրեայ այցելութեան մը համար մեկնած էր Թիֆլիս:

Հանդիպումին ընթացքին Շեւարտնաձէ ողջունեց բարձր մակարդակի վրայ երկու երկիրներու յարաբերութիւնները եւ կողմերու պատրաստակամութիւնը՝ երկխօսութեան ճամբով խնդիրներու լուծման առնչութեամբ: Շեւարտնաձէ եւ Օսկանեան քննարկեցին շրջանային խնդիրներ, յատկապէս՝ հակամարտութիւններու լուծման, տնտեսական ծրագիրներու մշակման եւ զարգացման, հարցադրութեան ուղիներու բարելաւման եւ գործարկման առընչուող հարցեր:

Նախարար Օսկանեան եւ Վրաստանի ելեմուտքի նախարար երէկ ստորագրեցին «Հայաստանի կառավարութեան եւ Վրաստանի գործադիր իշխանութեան միջեւ Հայաստանի հանդէպ Վրաստանի պարտքի վերաձեւակերպման մասին» համաձայնագիրը: Նախարար Օսկանեանի գլխաւորած պատուիրակութիւնը երէկ նաեւ հանդիպում ունեցաւ Վրաստանի իշխա Բ. պատրիարքին հետ: Կողմերը անդրադարձան երկու ժողովուրդներու մշակութային եւ հոգեւոր ընդհանրութիւններուն, ինչպէս նաեւ ընդգծեցին այդ կապերու զարգացման անհրաժեշտութիւնը:

ԸՍՏ ԴԵՍՊՈՒՆ ՕՐՏՈՒԷՅԻ

ՈՒԱՇԻՆԿԹԸՆ ԴԵՄ Է Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎԵՐՍԿՍՄԱՆ

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտուէյ Հայաստանի Հանրային Պատկերասփիւռնի տրուած հարցազրոյցի մը մէջ յայտարարեց, որ Միացեալ Նահանգներ բացարձակապէս դէմ են Լեւոնային Ղարաբաղի մէջ պատերազմական գործողութիւններու վերսկսման:

Խօսելով Հայաստանի եւ Ազրպէյճանի հետ Միացեալ Նահանգներու զինուորական գործակցութեան մասին, դեսպան Օրտուէյ յայտնեց, որ Ուաշինկթըն մտադիր չէ խախտել շրջանին մէջ հաստատուած ուժեղ սահմանափակումները: Օրտուէյ նշեց, որ Ուաշինկթըն, ինչպէս նաեւ ԵԱՀԿի Մինսքի խմբակի համահարգուած միւս երկիրները՝ Ֆրանսա եւ Ռուսիա, շահագրգռուած են հարաւային կողմի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման:

Դեսպան Օրտուէյ յայտնեց, որ Միացեալ Նահանգներ պիտի շարունակեն նրբաբան օժանդակութիւն տրամադրել Հայաստանին: Նշելով, որ Հայաստան այս տարի պիտի ստանայ մօտ 90 միլիոն տոլար, Օրտուէյ ըսաւ, որ այդ գումարը յառաջիկայ տարի պիտի նուազի 70 միլիոնի:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵ

ԻՐԱՆԻ ՄԷՋ ԾԱՄԲՈՐԴԱՏԱՐ ՕԴԱՆԱԻ ՄԸ ՋԱԽՉԱԽՈՒԹԵՑԱԻ. 117 ՉՈՂ

117 հոգի փոխադրող իրանեան օդանայ մը երէկ ջախջախուեցաւ Իրանի արեւմտեան լեռնային շրջանի մը մէջ, երբ կը փորձէր էջք կատարել, յայտնեցին պաշտօնատարները եւ սկանաւտեաները:

«Թուփուլի - 154» տիպի օդանայը, որ կը պատկանէր «Իրան Էրթուր» ընկերութեան, մայրաքաղաք Թեհրանէն իտոմամպատ կ'ուղղուէր, երբ անհետացաւ ուտարի պատաններէն, օդակայան հասնելէն քանի մը վայրկեան առաջ: Ոչ պաշտօնական աղբիւրներու համաձայն՝ ամպոտ մը ընդհատեց իրանաբար էջքի դժուարութիւններ պատճառած է:

Իրանցի պաշտօնատար մը ըսաւ, որ 105 ճամբորդներու կար-

գին էին բարձրաստիճան չորս պաշտօնատարներ: Իսկ դիւանագէտներ ըսին, որ օդանային մէջ կը գտնուէին նաեւ չորս պաշտօնակիրներ: Նախական տեղեկութիւններուն համաձայն՝ 117 ճամբորդներէն ու անձնակազմի անհամարներէն ոչ մէկը փրկուած է արկածէն:

Նախագահ Մոհամէտ խաթեմի իրահանգէց կազմութիւնը յատուկ մարմինի մը, քննութիւն քանալու համար արկածին շուրջ:

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՅՏԵ

Արամ Ա. կաթողիկոս երէկ գիշեր իմասալէ ետք Իրանի հա-

ԿԻՊՐՈՍ ԿԸ ՀԵՐՔԷ, ԹԷ ԿԸ ՄՏԱԴՐԷ ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱԹԻՒՆՆԵՐ ԳՆԵԼ

ՊՈԼԻՍ, 12 (ՌՈՅԹԸԸՁ).- Կիպրոսի արտաքին գործոց նախարար Իոաննիս Քասուլիտէս հերքեց թրքական մամուլին այն տեղեկութիւնները, թէ Կիպրոսի կառավարութիւնը կը ծրագրէ 40 ուղղաթիւներ գնել Ռուսիայէն:

«Նման ուղղաթիւներու մասին ոչինչ գիտեմ: Այս լուրը տարածանութիւն է», ըսաւ Քասուլիտէս, որ Պոլիս կը գտնուի Եւրոպայի Միութեան եւ իսլամ երկիրներու միջեւ երկխօսութեան նուիրուած խորհրդաժողովին:

Միւս կողմէ, անդրադառնալով յոյն կիպրացի ղեկավար Կիաֆթոս Քլեբիտէի մէջ թրք կիպրացի ղեկավար Ռուսթ Տենքթաշի միջեւ սկսած տիւրկիւն, Քասուլիտէս յայտնեց, որ երկխօսութիւնը տակաւին ընթացքի մէջ է եւ հեռու կը պահուի տեղեկատուական միջոցներէն: Ան մերժեց մեկնաբանութիւններ կատարել Քլեբիտէի եւ Տենքթաշի բանակցութիւններուն մասին:

Սակայն, Քասուլիտէս քննադատեց Տենքթաշի պնդումները, որ Կիպրոսի մէջ երկու պետութիւն ըլլայ, այլ խօսքով՝ Կիպրոսը մնայ բաժնուած: «Յոյն կիպրացիները կ'ողգեն Կիպրոսը միացնել, սակայն Տենքթաշ կ'առաջարկէ երկու պետութիւններով Կիպրոս մը ստեղծել Կիպրոսի տաղանայի լուծման իրրեւ լուծում», աւելցուց Քլեբիտէս:

Ըստ Քասուլիտէսի՝ Քլեբիտէս - Տենքթաշ բանակցութիւնները կ'երկարին քանի մը ամիսներու վրայ եւ հաւանաբար Յուլիանի կարելի ըլլայ որոշել, թէ բանակցութիւնները արդիւնաւէտ են, թէ ապարդիւն:

Ան յայտնեց նաեւ, որ կ'ողգէ հանդիպում մը ունենալ թուրքիոյ արտաքին գործոց նախարար Իսմայիլ ձէմի հետ: «Առաջարկեցի թուրք պաշտօնակիցին հետ հանդիպում մը ունենալ քննարկելու համար կարգ մը հարցեր, սակայն յստակ է, թէ ձէմ չ'ուզեց, որ մեր միջեւ նման հանդիպում մը կայանայ», ըսաւ Քասուլիտէս:

ՆԱԽԱԳԱՀ ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԱՍՐԻ ԼԱՀՈՒՏԻ ԵՐԳՈՒՄԸ



Նախագահը եւ ժըսը կ'ընդունին Լահուտի երգումը:

Նախագահ զօր. Էմիլ Լահուտ երէկ Պապատայի պալատին մէջ ընդունեց երգումը Գերագոյն Ատենանի խորհուրդի նոր նախագահ Նասրի Լահուտի: Երգման արարողութեան ներկայ էր արդարութեան նախարար Սամիր ժըսը:

Նախագահ զօր. Լահուտ իր խօսքին մէջ վեր առաւ երկրին արդարադատ մարմիններու անհրաժեշտութիւնը, շեշտելով անոնց անկախ ըլլալու իրողութեան վրայ: Նախագահ Լահուտ կարեւորեց դատական իշխանութեան դերը, յանուն քաղաքացիին եւ պետութեան իրաւունքներու պաշտպանութեան:

Նախագահ Լահուտ երէկ ընդունեց նաեւ այցելութիւնները պաշտպանութեան նախարար խալիլ Հրատուրի եւ դաշմակառններու հարցերու նախարար Մարուան Համատէի:

ՆԱԽԱՐԱՐ ՅՈՎՆԱՆԵԱՆ ԿԸ ՊԱՏՐԱՍԵՔ ՖՐԱՆՍԱՅԻ ԻՐ ՊԱՇՏՕՆԱԿԻՅԻՆ ԼԻԲԱՆԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան Ֆրանսա - Լիբանան երիտասարդութեան եւ մարմնակրթութեան աշխատանքներու փորձագիտի պատասխանատու Ֆապիէն Ռիպիէրի հետ պատրաստեց 2002-2003ի փորձագիտը, որպէսզի յառաջիկայ Ապրիլին Պէյրութի մէջ ֆրանսացի իր պաշտօնակիցին՝ Մարի ժորժ Պիլֆէի հետ վաւերացնէ պայման:

Նախարար Յովնանեան արդէն իսկ հանդիպում մը ունեցած էր Պիլֆէի հետ. Մարտի մէջ, «Մարպիկներու խթանիչ դերերու գործածութեան դէմ պայքար» թեմայով կայացած խորհրդաժողովին, որուն մասնակցած էին եւրոպական եւ միջինարեւելեան երկիրներու երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարները: Խորհրդաժողովի ընթացքին որոշուած էր նախարար Պիլֆէի այցելութիւնը Լիբանան:

Միւս կողմէ, նախարար Յովնանեան այսօր առաւօտեան պիտի ընդունի Լիբանանի ֆուտբոլի ֆետերատիւնի մէկ պատուիրակութիւնը, որուն հետ պիտի քննարկէ ՖԻՖԱի նախագահին Լիբանան այցելութեան պատրաստութիւնները:

Նախարար Յովնանեան այսօր պիտի ընդունի նաեւ տեղեկատուութեան նախարար Ղապի Արիտին եւ տիկին Նուրա ժոնպլարը:

ՊՈԼՍՈՅ ՄԵՋ ԲԱՅՈՒԵՅԱՐ ԵՒՐՈՊԱ - ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՅՈՐՈՒՄԸ

ՆԱԽԱՐԱՐՆԵՐ ԸԱՄՍՈՒՏ ԵՒ ՇԱՐԷՆՈՒՆԵՑԱՆ ԸԱՆԴԻՊՈՒՄ ՍԸ

Իսլամ դեկավար մը պաշտպանեց Իսրայէլի դէմ պաղեստինցիներու պայքարը, ինչպէս նաեւ ամբաստանեց Արեւմուտքը, դիտել տալով, որ անիկա միայն արաբներն ու իսլամները գործողներ կը նկատէ: Քաթարի արտաքին գործոց նախարար շէյխ Համատ Պրն ժամէմ Սանի, որ կը խօսէր Պոլսոյ մէջ կայացող Եւրոպա - Իսլամական աշխարհ ֆորումին, ըսաւ նաեւ, որ Արեւմուտքը կը հաստատայ, թէ ահաբեկչութիւնը արտադրութիւնն է ուրիշներու եւ թէ այդ ուրիշները արաբներն ու իսլամներն են:

Պոլսոյ ֆորումին մասնակցող իսլամ ու եւրոպացի դեկավարները, թէեւ կոչ ուղղեցին միայն ճնշում քանցելու նախաձեռնութիւններու՝ յառաջիկայից քի մէջ դնելու համար Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացը, սակայն անոնք տարակարծութիւններ ունեցան մտտեցումին ու որդեգրուելիք կեցածքին մասին:

Սանի ըսաւ, որ պէտք է ընդունել լուծում մը գտնուի պահանջները:

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Սաւիէ Սոլանա, իր կարգին, կոչ ուղղեց Ե. Միութեան եւ Իսլամական Խորհրդի միջև կայացող զրոյսի միասին աշխատին վերջ տալու համար վայրագութեան ու արիւնահեղութեան, որ աւելի քան տարիէ մը ի վեր կոտորուած էր Իսրայէլի կողմէ:

70 արտաքին գործոց նախարարներուն մէջ են նաեւ Լիբանանի եւ Սուրիոյ նախարարները՝ Մահմուտ Համմուտ եւ Ֆարուք Շարէհ, որոնք ժողովին կուգահեռ առանձին հանդիպում մը ունեցան, ինչպէս նաեւ երկուքը միասին տեսակցութիւն մը ունեցան Արաբական Լիգայի ընդհանուր քարտուղար Ամր Մուսայի հետ: Համմուտ եւ Շարէհ քննարկեցին Լիբանանի եւ Սուրիոյ ուղղուած իսրայէլեան վերջին ամբաստանութիւնները, ինչ կը վերաբերի «Քալիփա»-ի եւ իրանցի ահաբեկչական ցանցերու Պէքայի մէջ ներկայութեան:

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Սաւիէ Սոլանա, իր կարգին, կոչ ուղղեց Ե. Միութեան եւ Իսլամական Խորհրդի միջև կայացող զրոյսի միասին աշխատին վերջ տալու համար վայրագութեան ու արիւնահեղութեան, որ աւելի քան տարիէ մը ի վեր կոտորուած էր Իսրայէլի կողմէ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

● ԱՌՈՂՋԱՊԱՆՈՒԹԵԱՆ նախարար Սլէյման Յրենժիէ երէկ ստորագրեց որոշում մը, որ կ'արտօսէր որեւէ մէկուն դէմ ներածել, թէ արտօսագիր ունի: Նախարարը յոյս յայտնեց, որ այս քայլը կը նպաստէ նաեւ դեղերու սակին նուազումին:

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիհ Պըրրի երէկ հեռաձայնային հարցազրույցի մը ունեցաւ:

● ԵՆԵՒՍՈՒՏՔԻ եւ պիւնճէի խորհրդարանի յանձնախումբը երէկ ժողով մը գումարեց եւ որդեգրեց վեց օրինակներ, որոնց զիջարներն են. կառավարութեան վստահելի Լիբանան - Սուրիա օդային կապի համաձայնագրի վաւերացումը, Մարտի հետ առեւտուրի տուրքը կրկնապատկել:

ՊԵՐՐԻ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԼՈՔՆԵՐՈՒ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի երէկ ժողով մը գումարեց խորհրդարանական պլոքներու պետերուն հետ, անոնց հետ ճշդելու համար թուական մը՝ խորհրդարանի լիազուարթ մը ընթացքին նախարարաց խորհուրդի հաշուետուութեան եւ գործունեութեան ըստ էութեան քննարկման համար: Նեպիհ Պըրրի այս գծով պիտի կայանի նաեւ ոչ պոքի անդամ երեսփոխաններու հետ:

Երկուսն ժողովին ներկայ էին խորհրդարանի փոխ նախագահ Էլի Ֆըրզլի, խորհրդարանի ընդհանուր քարտուղար Ատման Տահեր, խորհրդարանական պլոքներու պետեր՝ նախարարներ Սլէյման Յրենժիէ, Նեպիհ Մարտի, երեսփոխաններ՝ Միշէլ Մըր, Ուալիտ ժոնպլար, Էլի Սըաֆ, Ասատ Հըրտան եւ Ֆարէս Պուէյյ:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ
Սոյն ձեռնարկին հետեւեալ ազգայինը կը ստանան օրուան մը ձախ ծախսը՝ 300 տուարով:
Տիկին Մարո Դանիւլեան՝ Արմեն Դանիւլեանի մահուան 7րդ տարեկիցին առիթով:

ԱԶԳԱՅԻՆ ԼԵՒՈՆ ԵՒ ՍՈՅԻԱԿԱՆ ԶԱԿՈՒԹԵԱՆ ՔՈԼԵԾ
Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան քուէի կազմակերպած վիճակահանութեան վիճակագրութիւնը, որ տեղի պիտի ունենար Հինգշաբթի, 14 Փետրուարին, յետաձգուած է Հինգշաբթի, 18 Ապրիլին:
ՏՆՕՐԵՒՈՒԹԻՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՎԱՃԱՌԱՆԻՇՆԵՐՈՒՆԵՐԿԱՅԱՅՈՒՅՉՈՒԹԵԱՆ ԳԱՐՅՈՎ ԱՂՄՈՒԿԸ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐԸ ԵՒ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍՏԻ ՄԱՐԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ ԺՈՂՈՎ ՄԸ ԳՈՒՄԱՐԵՑԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Երէկ առաւօտուն, նախքան Ամման մեկնումը, վարչապետ Ռաֆիք Հարիրի Գըրայթէմի մէջ ժողով մը գումարեց առեւտրականներու եւ ճարտարար-ւեստի մարզի պատուիրակութիւններու հետ, Ատնան Քասսարի եւ եւ ժաք Սարրաֆի զլիաւորութեամբ: Անոնք կառավարութեան պահանջները վերաբերեցին ներկայացուցչութեան «մենայնօրէն» հարցը եւ գայն շեղելու համար: Վարչապետը ըսաւ, որ նախ կառավարութիւնը դէմ է առեւտրականներուն, իսկ այդ հարցը տակաւին չէ ընտարկուած նախարարաց խորհուրդին կողմէ: Ըստ լրատուական աղբիւրներու, հարցը հաւանաբար արծարծուի Հինգշաբթի օրուան նիստին ընթացքին:

ՅԱՒԵԼԵԱԼ ԱՐԺԵՔԻ ՏՈՒՐՔԻՆ ԳԵՄ ԵՐՐԵՒ ԲՈՂՈՔ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 21 ՓԵՏՐՈՒԱՐԻՆ՝ ԳՈՐԾԱԴՈՒԼ
Աշխատանքային Համադաշնակցութիւնը երէկ գումարեց արտակարգ ժողով մը, որուն ընթացքին որոշեց Հինգշաբթի, 21 Փետրուարին գործադուլ կատարել, ինչպէս նաեւ կազմակերպել ցոյցեր եւ նստացոյցեր՝ կառավարութեան կեղծոտեղիքին առջեւ, առ ի բողոք վարձքերու նոր օրէնքին եւ յաւելեալ արժեքի տուրքի գործադրութեան, յատկապէս ինչ կը վերաբերի դեղերու եւ ուտելիքներու պարագային:
Սոյն օրը, գործադուլի կը դիմեն նաեւ Պէյրութի նաւահանգիստի պարտօսեաները, իբրեւ բողոք իրենց պաշտօնակիցներուն գործէ արձակման (պանգուածային) որոշումին դէմ:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՏԻԿՆՈՋ ԱՅՅԵԼՈՒՆԵՐԸ

Լիբանանի Առաջին Տիկին Անտրէ Լահուտ երէկ Պապատայի նախագահական պալատին մէջ ընդունեց երկրամի հիւնդուլթեան տառապող մանուկներու սենտիքայի մէկ պատուիրակութիւնը:
Տիկին Լահուտ շեշտեց, որ ինք պատրաստ է նիւթական օժանդակութիւն մատուցելու այս սենտիքային եւ երկրամերու ախտէն նախագրււանալու քարոզչութեան նպատակով:
Հանդիպումին ընթացքին սենտիքայի նախագահը տեղեկութիւններ փոխանցեց երկրամերու հիւանդութեան տառապող հարիւրաւոր երեսներու պարագաներուն, ինչպէս նաեւ սենտիքային դիմագրւած դժուարութիւններուն մասին:

ՏՈՔԹ. ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ
(Մասնագետ՝ քիթի - կոկորդի - ականջի)
Այսուհետեւ յարգոյ իր հիւանդները կ'ընդունի միայն Չալքայի ST. MARCH բժշկական դարմանատան կեղծոտին մէջ, ամէն օր կ'ստի Ետք ժամը 3:00էն 5:00, ժամադրութեամբ: Կեռ. 03-727277:

ԼՈՅՍ ՏԵԱԿ
ՀԱՅՐԵՆԻ ՉԱՒԱԽՔ
«Ազգակ» յատուկ հրատարակութիւնը: 496 էջ:
● Ստանալու համար դիմել գրախանութներ՝ Համազգային, Նարեկացի, Ոսկեդար, Ուրֆալեան եւ Կոմիտաս:
ԳԻՆ՝ 15.000 Լ.Ո.

ՇՆՈՐԸԱԿԱԼԻԷ
Նախկին երեսփոխան Աբրահամ Տտեան եւ համայն Տտեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնեն Լիբանանի նախագահ Նեպիհ Պըրրիի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի, որոնք իրենց ներկայացուցիչներով՝ նախարար Սեպուհ Յովնանեան, երեսփոխան Նասր Զընտիլ եւ նախարար Պըզարա Սըրիէ, մասնակից եղան իրենց մօր՝ ՇՈՒԾԱՆ ՏԵՏԵԱՆԻ յուղարկարարութեան:
Անոնք նաեւ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր այն նախարարներուն, երեսփոխաններուն, գիւտարկաններուն, դատաւորներուն, կրօնականներուն, կուսակցութիւններուն, կազմակերպութիւններուն եւ եկեղեցիներուն, կազմակերպութիւններուն, ինչպէս նաեւ բոլոր բարեկամներուն, որոնք անձամբ, հեռախօսով կամ հեռագրով մասնակից եղան իրենց մօր մահուան սուգին:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԳԱՐՅԱՐԱՊԵՏՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՐՅԱՐԱԳԵՏՆԵՐՈՒ ՄՈՒԹԻՒՆ (ՀԱՅՃԱՐ)
ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Միութեան վարչութիւնը կը հրաւիրէ ընկերակցութեան (syndicat) անդամ հայ ճարտարագետներն ու ճարտարագետները՝ խորհրդակցական անյապաղ հանդիպումի մը՝ հայ թեկնածուներու ընտրութեան համար, Ուրբաթ, 15 Փետրուար 2002, երեկոյեան ժամը 7:00ին, Garden Tower, Ամբիլիաս:
ՎԱՐՉՈՒԹԻՆ

● ԿԵՆՍՈՂՈՐՏԻ խորհրդարանի յանձնախումբը երէկ գումարեց ժողով մը եւ նախարարաց խորհուրդէն պահանջեց պատճառները իմանալ խորհրդարանի յղուելիք որոշումներուն վերաբերող օրինակները:

● ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ նախարար Պասէլ Ֆլէյհան երէկ մեկնեցաւ Գահրէ, պատուիրակութեան մը ընկերակցութեամբ, մասնակցելու համար արարական երկիրներու տնտեսական խորհուրդի ժողովներուն:

● ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախկին նախագահ **ԿՈՒՉՈՒԻ**
● Ոսկերչատուն մը կարիք ունի մտնի վրայ աշխատող փորձառու օրհորդի մը: Կեռ. 01-268361:

ԵՌՈՒՐԱ ՖԻՇԸՐ ԿԸ ՔՆՆԱԿԱՆ ՊՈՒՇԻ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐԸ

ՊԵՐԼԻՆ, 12 (ՌՈՅԹԸՐԸ) - Գերմանիայի արտաքին գործոց նախարար Երոլդ Երեքարթի օր խոստիլ քննադատեց Մ. Նահանգներու նախագահ Ջորջ Պուշին տեսակետները աշխարհին նկատմամբ, զգուշացրեց ներքին թէ պէտք է իր դաշնակիցները իբրև արբանեակ պետութիւններ նկատէ:

«Յ միջառ ընակչութեամբ աշխարհ մը դէպի խաղաղ ապագայ մը առանձինն պիտի չառաջնորդուի՝ ամէնէն ուժեղ երկրին կողմէն, ըսած է Ֆիշըր՝ գերմանական «Տայ Վեյթ» օրաթերթին:

Ֆրանսացի իր պաշտօնակիցին՝ Իւլիէր Վետրինի նման, որ անցեալ շաբաթ Ուաշինկթընը քննադատած էր արտաքին հարցերու հանդէպ «պարզունակ» մօտեցում ցուցաբերելու յանցանքով, Ֆիշըր քննադատած է Իրանը եւ Հիւսիսային Քորէան «չարեւմեան առանցք»ի մը ծիրէն ներս ահաբեկչութիւն հովանաւորելու յանցանքով ամբաստանող Պուշին կեցուածքը:

ԱՅՍՕՐ՝ ՃԷՄ - ՓԱՓԱՆՏՐԵՒԻ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՈՂՍՈՅ ՍԷՋ

ԱԹԷՆՔ, 12 (ՌՈՅԹԸՐԸ) - Յունաստան եւ Թուրքիա երեքարթի օր որոշած են առևտուրին թափ տալ, մինչ երկու երկիրներուն արտաքին գործոց նախարարները Պոլսոյ մէջ տեսակցութիւն կ'ունենային քաղաքական աւելի փշոտ հարցեր քննարկելու համար:

Թուրքիոյ առևտուրի փոխ նախարար Քուրսատ Թուզմէն Աթէնքի մէջ կայացած տնտեսական երկկողմանի ժողովի մը ընթացքին յայտնած է, թէ երկու երկիրներուն նպատակն է յառաջիկայ տարիներուն առևտուրը ընդլայնել, զայն հասցնելով 5 միլիարտ տոլարի: Ներկայիս անիկա 1 միլիարտ տոլարի շուրջ է:

Յունաստան Թուրքիոյ գլխավորաբար բամբակ եւ վառելանիւթ կ'արտածէ, մինչ Թուրքիա մետաղ եւ բամբակի թելեր կ'արտածէ Յունաստանի:

Արտաքին գործոց նախարարներ Ջորջ Փափանտընը եւ Իսմայիլ Ճէմ Չորեքարթի օր (այսօր) Պոլսոյ մէջ տեսակցութիւն պիտի ունենան՝ յարաբերութեանց մէջ ձեռնարկ ծիրէն ներս:

Թուզմէն ըսած է, թէ Անգարա ամէն գնով կ'ուզէ, որ Թուրքիայէն բնական կազը Յունաստանի ճամբով Եւրոպա մղուի:

ԻՐԱՔ ԿԸ ՅՈՒՍԱՅ, ՈՐ ԹՈՒՐԵՒԱ ԿԸ ԿԱՆԽԱՐԳԻԼԷ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐԵՒԷ ՅԱՐՁԱԿՈՒՄ ԻՐԱՔԻ ԿՐԱՅ

Իրաքի արտաքին գործոց նախարար Նաժի Սապրի յայտնեց, թէ Պաղտատ կը յուսայ, որ դրացի Թուրքիա պիտի աշխատի կանխարգիլելու համար ամերիկեան որակի յարձակում իրաքի դէմ:

Սապրի, որ կը խօսէր Պոլսոյ եւրոպայական խորհրդածոյողովին, դիտել տուաւ, որ Իրաքի դէմ յարձակում մը որեւէ երկիրի համար չահեկան պիտի չըլլայ: Սապրի յայտնեց, որ Թուրքիա ի գործ պիտի դնէ ճիշդը, որոնք կ'իյնան քարի դրացութեան արտաքին քաղաքական երկիրներ պիտի կապերու սահմաններուն մէջ: Սապրի անկողնուց, որ Իրաքի մէջ խաղաղութիւնն ու կայունութիւնը պիտի նպաստէ այլ երկիրներու խաղաղութեանն ու կայունութեանն:

Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Էճէլթի անցեալ շաբթուան մէջ նամակ մը ուղարկած էր Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի՝ թելադրելով, որ ՄԱԿի կէսը քննարկելու վերադարձի արտօնութիւն տայ, այլապէս՝ վտանգաւոր հետեւանքներ կրելու պատրաստ պէտք է ըլլայ: Իսկ երկուշաբթի օր ան ըսած էր, որ Թուրքիա չ'ուզէր, որ Իրաքի դէմ պատերազմ յայտարարուի:

Միւս կողմէ, Իրաքեան «Հատիսիա» օրաթերթը դատապարտեց

Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնիի Միջին Արեւելք այցելութեան ծրագիրը, դիտել տալով որ անիկա ապարդիւն պիտի ըլլայ, որովհետեւ պիտի չկարենայ զօրակցութիւն ապահովել տարբեր շրջանի դէմ պատերազմին:

«Հատիսիա» անկողնուց, որ Ուաշինկթըն կը պատրաստուի կարաքներուն ու իսլամներուն դէմ նոր յարձակումի մը ենթահողը պատրաստելու եւ այդ ուղղութեամբ Իսրայէլ ու արաբական երկիրներ պիտի այցելէ Չէյնի:

Չէյնի շրջապատուի մը պիտի ձեռնարկէ այցելելու համար 11 երկիրներ, որոնց կարգին են Սէուտական Արաբիա, Յորդանան, Քուէյթ եւ Թուրքիա:

«Իրաք» օրաթերթը իր կարգին դատապարտեց Ուաշինկթընը, դիտել տալով, որ անիկա իբրեւ պատրուակ կ'օգտագործէ հաւաքական քանդումի կէսը յարձակում մը գործելու համար Իրաքի դէմ:

Սպիտակ Տունէն հրապարակուած յայտարարութիւնները սակայն կ'ըսեն, որ Ուաշինկթըն նպատակ չունի անմիջապէս յարձակելու Իրաքի վրայ: Սպիտակ Տան մէջ քանթերը յայտնեց, որ նախագահ Ջորջ Պուշ տակա-

լին որեւէ որոշում չէ տուած Իրաքի դէմ գործողութեան մը մասին:

ՄԱԿի մէջ ամերիկացի նախկին դեսպան Ռիչըրտ Հոլպրուք սակայն կը նախատեսէ, որ Պուշ պիտի փորձէ տապալել Սատտամ Հիւսէյնը: Հոլպրուք ըսաւ, որ Պուշ պիտի փորձէ իր հորմէն մէկ քայլ աւելի առաջ տանիլ Իրաքի դէմ արշաւը՝ Սատտամը տապալելով: Պուշի հայրը՝ նախկին նախագահ Ջորջ Պուշ առաջնորդած էր Իրաքեան ուժերը Քուէյթէն դուրս հանելու քաղաքական ուժերը: Հոլպրուք անկողնուց, որ անցնող քսանամեակին ամերիկացիներուն գործած մեծագոյն սխալը Սատտամը իշխանութեան վրայ պահելն է: Ան դիտել տուաւ, որ Ուաշինկթըն կը գիտակցի այդ սխալին եւ կ'ուզէ պայն սրբագրել:

Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Էճէլթի անցեալ շաբթուան մէջ նամակ մը ուղարկած էր Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի՝ թելադրելով, որ ՄԱԿի կէսը քննարկելու վերադարձի արտօնութիւն տայ, այլապէս՝ վտանգաւոր հետեւանքներ կրելու պատրաստ պէտք է ըլլայ: Իսկ երկուշաբթի օր ան ըսած էր, որ Թուրքիա չ'ուզէր, որ Իրաքի դէմ պատերազմ յայտարարուի:

Միւս կողմէ, Իրաքեան «Հատիսիա» օրաթերթը դատապարտեց

Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիք Չէյնիի Միջին Արեւելք այցելութեան ծրագիրը, դիտել տալով որ անիկա ապարդիւն պիտի ըլլայ, որովհետեւ պիտի չկարենայ զօրակցութիւն ապահովել տարբեր շրջանի դէմ պատերազմին:

ՄԱԿի մէջ ամերիկացի նախկին դեսպան Ռիչըրտ Հոլպրուք սակայն կը նախատեսէ, որ Պուշ պիտի փորձէ տապալել Սատտամ Հիւսէյնը: Հոլպրուք ըսաւ, որ Պուշ պիտի փորձէ իր հորմէն մէկ քայլ աւելի առաջ տանիլ Իրաքի դէմ արշաւը՝ Սատտամը տապալելով: Պուշի հայրը՝ նախկին նախագահ Ջորջ Պուշ առաջնորդած էր Իրաքեան ուժերը Քուէյթէն դուրս հանելու քաղաքական ուժերը: Հոլպրուք անկողնուց, որ անցնող քսանամեակին ամերիկացիներուն գործած մեծագոյն սխալը Սատտամը իշխանութեան վրայ պահելն է: Ան դիտել տուաւ, որ Ուաշինկթըն կը գիտակցի այդ սխալին եւ կ'ուզէ պայն սրբագրել:

Թուրքիոյ վարչապետ Պիլիէթ Էճէլթի անցեալ շաբթուան մէջ նամակ մը ուղարկած էր Իրաքի նախագահ Սատտամ Հիւսէյնի՝ թելադրելով, որ ՄԱԿի կէսը քննարկելու վերադարձի արտօնութիւն տայ, այլապէս՝ վտանգաւոր հետեւանքներ կրելու պատրաստ պէտք է ըլլայ: Իսկ երկուշաբթի օր ան ըսած էր, որ Թուրքիա չ'ուզէր, որ Իրաքի դէմ պատերազմ յայտարարուի:

ԹԵՎՐԱՆ ԿԸ ԶԳՈՒԵԱՅՆԷ ՈՒԱՇԻՆԿԵԱՆ ԱՌԱՆՁԻՆՆ ԳՈՐԾԵԼԷ

Իրան երէկ Ուաշինկթընը պաշտօնապէս թէ կրնայ «սահաբեկչութեան դէմ պատերազմ»ին հանդէպ ձեռքբերուած ընդհանրական զօրակցութիւնը քանդել՝ առանձին գործելով եւ պիտուորական ուժի սպառնալիք կատարելով:

Իրանի արտաքին գործոց նախարար Քամալ Խարապի Թուրքիոյ մէջ կայացող իսլամական եւ եւրոպական երկիրներու նախարարներու ժողովին յայտնած է, թէ Սեպտեմբեր 11ին Մ. Նահանգներու դէմ յարձակումներէն ետք ընդհանրական յայնաժիր համախոհութիւն գոյացած է:

«Գծքախտաբար Ուաշինկթընէն վերջերս եկող ճայնէրը միջազգային այս գիծէն բոլորովին դուրս են», ըսած է Խարապի:

«Բոլորս պիտի պարտուինք, եթէ այս ընթացքը չ'փոխուի», յայտնած է ան:

Մ. Նահանգներու նախագահ Ջորջ Պուշ երկուշաբթի օր դարձեալ պաշտօնապէս թէ Իրաքը, Իրանը եւ Հիւսիսային Քորէան, յայտնելով, որ Մ. Նահանգներ առաքելութիւն մը ունին՝ կատեցնելու հաւաքական քանդումի կէսը մշակող երկիրներու սահաբեկչներու հետ գործակցութիւնը:

Նախագահը նշեալ երեք երկիրները կոչած է «չարութեան առանցք մը», որ հաւաքական քանդումի կէսը կը մշակէ:

Ամերիկացի այլ պաշտօնատարներ Իրանը ամբաստանած են «Բալիստ»ի կինէայներու սպաստան տալու եւ Աֆղանիստանի մէջ հաստատուած դիրքերէ կաղաղութիւնը ապակայունացնելու յանցանքներով:

ԻՐԱՆԻ ԵՐԵՍՓՈՒԱՆՆԵՐ ԾՈՅԻ ԶԱՐԻՂԻ ՇԱԲԹՈՒ ԴԵՍ ՄՊԱՈՆԱԼԻԸ ԿԸ ԸՆՆԱԳԱՏԵՆ

Միւս կողմէ, Իրանի խորհրդարանին մէջ բարձրաստիճան բարեկարգչականներ քննադատած են բարձրաստիճան ծայրայեղական հրամանատար մը, որ սպառնացած է Ծոցի մէջ քարիղի մարտի կապուած ամերիկեան շահերը հարուածել:

Իրանեան «ԻՐՆԱ» լրատու գործակալութիւնը երէկ հաղորդած է, թէ 20 երեսփոխաններ բացատրութիւն պահանջած են հարցին մասին պաշտպանութեան նախարար ծովակալ Ալի Շամիանիէն եւ արտաքին գործոց նախարար Քամալ Խարապիէն:

Իրանեան թերթ մը Շաբաթ օր մէջբերած է Յեղափոխութեան Պահակագունդի փոխ հրամանատար Մոհամէտ Պաքըր Չոլքատըրը, որ ըսած է, թէ Իրան ամերիկեան որեւէ յարձակումի պիտի հակադարձէ՝ Ծոցի միւս կողմը Ուաշինկթընի դաշնակիցներուն վնաս հասցնելով:

Իրանի ՕՓԷՔի ներկայացուցիչը Կիրակի օր մերժած է այդ սպառնալիքը ընդունիլ, յայտնելով, որ «մեր լաւ դրացիներուն դէմ սպառնալիքներուն մէջ որեւէ իրականութիւն չկայ»:

ՍԼՈՊՈՏԱՆ ՄԻԼՈՇԵՒԻՉԻ...

Շարունակուած Ա. Էջէն

Դատախապներու նախատեսութեամբ՝ առաջադրութիւնը առնուապէս 2 տարի պիտի տեւէ: Բազմաթիւ դէտեր կ'ակնկալեն, որ Միլոշեւիչ, որ կը մերժէ նոյնիսկ ճանչնալ կինը դատելու ատեանին իրատուները, փորձէ դատաւարութիւնը կարելի եղած չափով երկարաձգել:

Միլոշեւիչ մերժած է պաշտպան փաստաբաններ նշանակել, սակայն անոր իրական հարցերու խորհրդականներէն մէկը՝ Չոենքո Թոմանովիչ, յայտնած է, թէ երէկ նախկին նախագահը առաջին անգամ ըլլալով կապուած է վերոնշեալ երեք փաստաբաններուն, նախապէս մերժելէ ետք նոյնիսկ պանոնք ճանչնալ:

Դատախապներ յայտնած են, թէ բացման խօսքերը կրնան մինչեւ այսօր տեւել, որմէ ետք միայն Միլոշեւիչ առիթ պիտի ունենայ պատասխանելու:

ՅՈՅՅԵՐ

Միլոշեւիչի դէմ եւ թեր ցոյցեր տեղի ունեցած են Լա Հեյի ատեանի շէնքին առջեւ: Ամբաստանողներուն համար, Միլոշեւիչի դատավարութիւնը դէպի յառաջ պատմական քայլ մըն է՝ միջազգային բարոյականութեան համար: Իսկ անոր պաշտպանները կ'ըսեն, թէ անիկա արեւմտեան կեղծաւորութեան մէկ ցուցանիշն է: Սակայն, Միլոշեւի-

չի համակիրներուն ներկայութիւնը եւ անոր թեր ցոյցերը անեւ ինչ են, քան դէմ եղողները:

ONE SECOND IS ENOUGH...
Արկածը կը Պատահի Երկրորդական Մը Մեջ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՅՐԿԱՆ.
ԱՖՀԻԼ AFHIL
Աֆտի-Քէն, Ք. Յարկ, Դեռ. Եւ Յարկ. (01) 262231-242556-242557
Ism. AFED, 2ème étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

MESROBIAN TECHNICAL COLLEGE
The Pioneer In Technical Education
COMPUTER COURSES
@
MESROBIAN COMPUTER LEARNING CENTER
BASIC COURSES
(Windows - Word - Excel - Power Point - Microsoft Outlook - Internet Overview)
SPECIALIZED PROGRAMS
* Graphics & Animation
Adobe Photoshop - Premiere - Illustrator - Corel Draw - Quark Xpress
- 3D Studio Max - Free Hand
* Computer For Businessmen
Microsoft Access - Microsoft Project - Microsoft Visual Basic - Visual FoxPro - Dolphin
* Computer For Engineers & Architects
AutoCAD - Auto Architect
3rd Session
MONDAY, 18TH OF FEBRUARY 2002
Arax Street, Bourj Hammoud
Tel: (01) 260504, Fax (01) 262955
E - mail: mesobca@dm.net.lb
Web Site: www.mesrobian.com

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱՉՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ
ԻՆՉՊԷՍ
ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը
Չեր ինքնաշարժից պեմգիմից, մագնիսից, իւրից, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումից հետ միաժամանակ սերկայացուցէք FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք սնտեսական ծրագիրներու յաջողութեան:
ԻՆՉՊԷՍ USԱՆԱԼ FUEL CARD-Ը
FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն.
• ԱՖՀԻԼ գրասենեակ, Պուրճ Լամուտ
• Լամագգայիցի գրասենեակ, Պուրճ Լամուտ
• Գրատուն Caravelle, Չալքա
• Գրատուն Sava, Այնճար
• Գրատուն Կոմիտաս, Պէյրութ
• Obelix հաստատութիւն, Անթիլիաս
FUEL CARD ԿՐԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՇԵՏԵԿԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ
1. CORAL JAL EL DIB, Օլի Էլ Տիպ
2. HYPKO ANELIAS, Կարապ Ալ Դաուարճ
3. SPEED ANTELAS, Կարողիկոսարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապատեք մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPKO HAMRA, Պանք Տի Լիպանցե առաջ
7. MEDCO KARANTINA, Բարանքիցայի մայրուղի
8. CORAL BHAMDOUN, Դամակոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Միլայէլ, Սաատ պողոտայ
10. SPEED ALITTIHAD, Կալէրի Իթթիհատ
11. MANAR FANAR, Ֆանար, Նաոր պանդոկից կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորայ, «Ալմագ»ի կից
15. ԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պուրճ Լամուտ, Սից Էլ Ֆիլի մայր պողոտայ
Յազուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 ֆիւրմը:
Յազուրի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 01-242556 ֆիւրմը:
ՅԱՐԾԷ-ԶԱՐԻՂԻ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԾ ՄԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԴԵՍՊԱՆ ԾՈՆ ՕՐՏՈՒԷՅԻ ՀԵՏ

Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ վահան Յովհաննիսեան, Հ. Յ. Դ. Գեորգոյն Մարմինի ներկայացուցիչ Արմէն Ռուստամեան եւ Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակցութեան նախագահ Աղուան վարդանեան 6 Փետրուարին Հանդիպում մը ունեցան Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտոնէյի հետ: Ծուրը մէկուկէս ժամ տևած հանդիպումին ընթացքին բնակարանեցան Հայաստանի ներքին քաղաքական եւ տնտեսական կացութիւնը, ինչպէս նաեւ Հայաստան - Միացեալ Նահանգներ յարաբերութիւններն ու շրջանային հարցեր:

ԵՈՒՆԵՍՔՕ ԿԸ ՎԱԻԵՐԱՅՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Հայաստանի յուշարձաններու պահպանութեան վարչութեան պատասխանատու վահան Բաղդասարեանի համաձայն, վարչութեան եւ Հայաստանի հասարակական կազմակերպութիւններուն կողմէ ԵՈՒՆԵՍՔՕ-ի ներկայացուած մշակութային 25 ծրագիրներէն վաւերացում ստացած է վեցը: Այսպիսով, Նորվեկիոյ մշակութային զարգացման գործակալութիւնը ստանձնած է իրագործումը Արագածոտնի մարզի «Տեղեր» մշակութային բնակավայրի վերանորոգման եւ պահպանման աշխատանքները, իսկ Ճափոն յանձն առած է վերանորոգել Ախթալա գիւղի մշակութային տարածքը:

Միւս կողմէ, ՄԱԿի Զարգացման ծրագիրին կողմէ Հաստատուած են Նորավանքի եւ Գնիշիկ գիւղի, Մեղրիի եւ Ծուանիձորի մշակութային զարգացման, ինչպէս նաեւ Ոսկեվազ գիւղի առնչուող ծրագիրը: Ներկայիս վարչութիւնը բանակցութիւններ կը վարէ Իտալիոյ համապատասխան մարմիններուն հետ՝ Ամբերդի պահպանութեան ծրագիրի կապակցութեամբ:

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ Կ'ՕԺԱՆԴԱԿԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԻՔԱԻՈՐՆԵՐՈՒՆ

7 Փետրուարին Երեւան հասած է ՄԱԿի Պարէնի Համաշխարհային Ծրագիրի Հայաստանի գրասենեակին՝ Միացեալ Նահանգներու կառավարութեան նուիրարներ 15,200 թոն ցորենի ալիւրը: Այս օժանդակութիւնը պիտի տրամադրուի Հայաստանի 140 հազար կարիքաւորներուն: Յայտնենք, թէ ցարդ Միացեալ Նահանգները Հայաստանի տրամադրած են 20 միլիոն տոլար արժողութեամբ 35 հազար թոն տարբեր տեսակի պարէնամթերք:

Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Ճոն Օրտոնէյ ըսած է, թէ Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու ծրագիրները սկսած են բազմաբնոյթ դառնալ: Ան աւելցուցած է, թէ իրենք կը ծրագրեն Հայաստանի մէջ իրականացուող կարիքաւորներու օժանդակութեան կողքին, իրականացնել ուսուցողական, տնտեսութեան զարգացման եւ այլ կարողութիւններու ու հմտութիւններու ձեռք բերման ծրագիրներ:

Հայաստանի մէջ Պարէնի Համաշխարհային Ծրագիրի ներկայացուցիչ, Հայաստանի գրասենեակի տնօրէն Էրիքա Երկընսըն տեղեկացուցած է, թէ Միացեալ Նահանգներու կողմէ Հայաստանի մէջ իրականացուած պարէնի յատկացումի ընդհանուր քանակը կը կազմէ 60 հազար թոն: Հայաստանի ընկերային ապահովութեան փոխ նախարար Արա Պետրոսեան ըսած է, թէ իրենք եւ Պարէնի Համաշխարհային Ծրագիրին միջեւ կնքուած յուշագիրին համաձայն, ստեղծուած է վերահսկիչ մարմին մը, որ կը հետեւի այս աշխատանքին:

ՊԱՏԳԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԹԱՓՈՒՐ ՏԵՂ ՄԸ ԵՒՍ

Հայաստանի Ազգային ժողովի պատգամաւորն է «Օրինաց Երկիր» խորհրդարանական խմբակցութեան նախկին անդամ (իսկ այժմ անկախ պատգամաւոր) Մամուէլ Աւետիսեան 8 Փետրուարին նշանակուած է Հայաստանի գիւղատնտեսութեան փոխ նախարար: Ան ընտրուած էր մեծամասնական ընտրակարգով՝ Շիրակի մարզէն:

Համաձայն Հայաստանի ընտրական օրէնսգիրքին, նշեալ ընտրատարածքին մէջ պատգամաւորական լրացուցիչ ընտրութիւններ տեղի պիտի ունենան Մայիս ամսուան երրորդ Կիրակին:

Յիշեցնենք, որ նոյն օրը պատգամաւորական լրացուցիչ ընտրութիւններ տեղի պիտի ունենան նաեւ Տաւուշի մարզի թիւ 75 ընտրատարածքին մէջ. նշեալ տարածքէն ընտրուած վանօ Սիրադեղեան Հայաստանի Ազգային ժողովին կողմէ զրկուած էր իր պատգամաւորական իրազօրութիւններէն:

ԴԻԻԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Իրանի մէջ Հայաստանի դեսպան Գեղամ Ղարիբջանեան, որ համառոտութեան կարգով Հայաստանի դեսպան է նաեւ Քաթարի մէջ իր հատարմագիրը յանձնած է Քաթարի իշխան շէյխ Համադ պըն Նալիֆ ալ-Թանիի: Գ. Ղարիբջանեան... Քաթարի իշխանին հետ ոչնեցած է նաեւ Հանդիպում մը, որուն ընթացքին քննարկուած են հայ - քաթարական յարաբերութիւններուն հեռանկարներն ու կարելիութիւնները:

Միւս կողմէ, հայրենի «Ազգ» թերթը կը տեղեկացնէ, որ դեսպան Գ. Գարիբջանեան համառոտութեան կարգով Հայաստանը պիտի ներկայացնէ նաեւ Աֆղանիստանի մէջ: Ան հաւանաբար Մարտ ամսուան ընթացքին իր հատարմագիրը յանձնէ Աֆղանիստանի ժամանակաւոր կառավարութեան ղեկավար Համիտ Քարզայի:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՅԱՐԵՐԱՌ ԴՈՒՅԻՆԵՐ

ԻՐԱՆ ՊԱՏՐԱՍՎՈՒՄՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄՈՒՏՔԻ ԱՐՏՈՆԱԳԻՐԻ ԳՐՈՒԹԻՒՆԸ

4 Փետրուարին Իրանի Իսլամական Յեղափոխութեան 23րդ տարեդարձին նուիրուած ձեռնարկի մը ընթացքին Հայաստանի մէջ Իրանի դեսպան Մուհամադ Գարեթա Քոնէյնի ըսած է, թէ Հայաստան եւ Իրան լաւ դրացիներ են: Ան նշած է, թէ երկու երկիրներուն միջեւ կայացած գործակցութիւնը, զանազան մարզերու մէջ, փաստ է, որ անոնց միջեւ յարաբերութիւնները հասած են բաւական լաւ մակարդակի: Դեսպանը յայտնած է, թէ Իրանի կառավարութիւնը պատրաստ է գործակցելու Հայաստանի կառավարութեան հետ մուտքի արտօնագիրի դրուութիւնը վերցնելու կամ մուտքի համար տրուող գումարները եւ քաղաքացիներու երթեւեկութեան ծախսերը նուազեցնելու առնչութեամբ: «Արմէնփրէս» կը յայտնէ, թէ այս յայտարարութիւնը գարնայի յառաջացած է Ազգային ժողովի մէջ, որ այս մէկը Իրանի կողմէ արգելք կը նկատէ Հայաստան-Ազգային ժողովին փոխանակումները: Ազգերի քաղաքագէտներու համաձայն այս քայլը կը նպաստէ Հայաստանի տնտեսական եւ ապահովական շահերուն:

ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՊԵՐՈՒ ԱՄՐԱՊԵՂՈՒՄ

Հայաստանի մէջ իրանցի արդիւնաբերողներու եւ ընկերութիւններու տէրերու միութեան գործադիր տնօրէն Այրամուրա Մատարիֆար «Իճրըֆար»-ի տուած է արցազորոյցի մը ընթացքին ըսած է, թէ Հայաստանի արդարադատութեան նախարարութեան կողմէ միութեան վերաբերումէն 5 տարի ետք արդէն Հայաստանի մէջ ստեղծուած են իրանեան ներդրումներու համար անհրաժեշտ պայմաններ եւ վստահութեան միջոցառումներ, բայց, աւելցուցած է ան, այժմ չկայ պետական մակարդակով համապատասխան ակադեմիան:

Ըստ Ա. Մատարիֆարի, Հայաստանի մէջ պէտք է ստեղծել պետական կառույց, որ պիտի զբաղի երկրին մէջ իրանական ներդրումներու քաղաքական եւ պաշտպանութեան հարցերով: Ան նշած է, թէ պէտք է իրագործել այս ծրագիրը, որովհետեւ իրանցի գործատէրեր պատրաստ են օրինական ձեւերով Հայաստանի մէջ գործունէութիւն սկսելու: Ա. Մատարիֆար ըսած է, թէ իր գլխավորած միութիւնը ամէն ձեւով կ'օժանդակէ նաեւ հայ գործատէրերուն՝ Իրանի մէջ աշխատանք տանելու համար:

Ա. Մատարիֆար ըսած է, թէ անցեալ տարուան ինն ամիսներուն ընթացքին Իրանէն Հայաստան բերած է 58 միլիոն տոլար արժողութեամբ արտադրութիւն, իսկ Հայաստանէն Իրան՝ 22 միլիոն տոլարի ապրանք: Հայաստան Իրանէն կը ներածէ շինանիւթ, սննդամթերք, իսկ Հայաստանէն դէպի Իրան կ'արտածէ մետաղեայ առարկաներ, հաստոցներ եւ այլն:

ՔԱՐՈՉՉՈՒԿԱՆ ԱՐՇԱԻՒՆՊԱՍ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՆ

«Գաղթականներու Միութիւն» կազմակերպութեան նախագահ Վլադիմիր Աղայեան 6 Փետրուարին կայացած կլոր սեղանի ընթացքին յայտարարած է, թէ կազմակերպութիւնը, 25 այլ կազմակերպութիւններու օժանդակութեամբ, սկսած է քարոզչական արշաւի մը, որուն նպատակն է պաշտպանել գաղթականներու բնակարանով ապահովուելու եւ անձնական իրաւունքներ ունենալու դատը: Վ. Աղայեան տեղեկացուցած է, թէ 1994 թուականէն ՄԱԿի գաղթականներու հարցերով զբաղող մարմինին ու այլ կազմակերպութիւններու կողմէ եւ Հայաստանի պետական պիւտճէնէ տրամադրուած գումարներով գաղթականներուն համար կառուցուած է աւելի քան 3000 բնակարան, սակայն անոնք գաղթականներուն սեփականութիւնը չեն նկատուիր:

Ըստ Վ. Աղայեանի, այսօր Հայաստանի բնակչութեան 10 առ հարիւր գաղթական է եւ արժարձուած հարցերուն լուծումը անհրաժեշտ է: Ան ըսած է, թէ այս հարցերը կը լուծուին օրէնսգրական փոփոխութիւններով, որոնցմով գաղթականներուն յատկացած բնակարանը պիտի սեփականաշնորհուի եւ պիտի դասուորուին Հանրակացարաններուն մէջ բնակող գաղթականներուն հարցերը:

ՆՈՐ ԾՐԱԳԻՐ՝ ԱՐՅԱԽԻ ՄԷՋ

Միացեալ Նահանգներու մէջ Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան ներկայացուցչութիւնը կը հաղորդէ, որ Քաթարի իշխան Ռալֆ եւ Սաւի Թուֆէնքեան ամուր, հայ կրթական հիմնադրամին հետ գործակցաբար, Լեոնային Ղարաբաղի մարաքաղաք Ստեփանակերտի մէջ պիտի հովանաւորէ 20 հազար տոլար արժողութեամբ տեղեկատուութեան ժամանակակից ծրագիր մը:

Ծրագիրը կը ներառէ 694 ուսանող, որոնք բաժնրւած են 33 խումբերու: Ուսման ծրագիրը կ'ընդգրկէ MS - DOS, MS Windows, MS Office ծրագրերներու ուսումնասիրութիւն եւ համացանցի օգտագործում:

Յայտնենք, որ անցեալ աշնան Արցախ իր այցելութեան ընթացքին Թուֆէնքեան ամուր մասնակցած է «Հիւսիս - հարաւ» մայրուղիի հիմնական հատուածի բացման արարողութեան, ինչպէս նաեւ այցելած է Ստեփանակերտի ԻՒՆԵՍԿՕ-ի թանգարանին անուան դպրոցը, որուն հիմնական վերանորոգութեան համար 1999-2000 թուականներուն անոնք նիւթական օժանդակութիւն կատարած էին:

Անցեալ տարուան Սեպտեմբերին Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արկադի Ղուկասեան Սաւի Թուֆէնքեանը պարգևատրած էր վահանակ Բարեպաշտի անուան մետալով՝ իբրեւ երախտագիտութիւն անոր հայրենասիրական գործունէութեան:

ԼՈՅՍԻ ՓԱՌԱԲԱՆԱՆՔ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՃԱՄԲՈՎ

Աւանդութիւնը, իր գրաւոր թէ բանաւոր միջոցներով ընդհանրապէս փոխանցուած պատգամ մը ըլլալով հանդերձ, է՛ նաեւ ապրուած համոզում, որ ժողովուրդին գիտակցութեան մէջ կը բացատրուի ՀԱՒԱՏՔ հասկացողութեամբ: Մեր ազգային թէ եկեղեցական կեանքին մէջ կ'արտացոլայ այս Հաւատքը, որուն զօրութեամբ կը շարունակուի պահպանումը հայ հոգեմտաւոր մշակոյթին, այսինքն՝ հայուն ինքնուրոյն դիմագիծին:

Երէկ տօնեցինք վարդանանքը, որովհետեւ հազարաւոր դարեր ապաւինած ենք հայուն ազատ ապրելու կամքին ու այդ անխորտակ կամքով յառաջացած ենք, գոյատեւած՝ իբրեւ ազգ:

Հայուն հեթանոսական հաւատալիքներն անգամ ունեցած են իրենց նուիրական ներգործութիւնը: Քրիստոնէութեան երեւումը այլակերպեց հեթանոսական մեր ազգային դիմագիծը՝ գայն վերածելով լուսատու երթի, յաղորդականութեամբ յարատեւելու սկզբունքի, սերունդէ սերունդ: Այս իրողութեան ճշմարտութիւնը կը տեսնենք Տէրունական սա տօնին մէջ, որուն քրիստոնէութիւնը տուած է Տեառնընդառաջ ընորոշումը: Գրեթէ աննշան դէպք կամ պատահար մը, որ կը պատկերէ մանուկ Յիսուսի տաճար ընծայումը: Այս երեւոյթի դիմաց կայ նաեւ Սիւմեոն ծերունիին մարգարէաշուկն ու մաղթանքը, թէ՛ Յիսուս մանուկը տեսնէր եւ ապա աչքերը փակէր: Մեր օրերուն մանաւորութիւնները կը մեկնաբանուին իբրեւ Ֆոլքլորիկ ապրումներ, բայց որ իրենց խորքին մէջ կը բովանդակեն հաւատքը, սյացքը դէպի բարին, դէպի յաւիտենականը, մնայուն արժէքը: Սուրբ գրային ընթերցումէն քաղուած այս զրուագին հայ ժողովուրդը միացուցած է նաեւ լոյս պաշտամունքը, որ արձագանք է հայ ժողովուրդին հին հաւատքներուն: Բոցավառ կրակին զօրութեան հաւատացած տրամադրութիւն մը տակաւին կը ջրղեղէ մեր հոգին, ու մեր մայրերը չեն մոռնար իրենց նորածինները տանելու հայոց եկեղեցին՝ նուիրելու սուճարային միջնորդին, ուրկէ պիտի գայ լոյսը մարդկութեան խորհուրդի:

Մեր մայրերը, երիտասարդ թէ երէց, այսօր ժամադրուած են Հայաստանեայց եկեղեցիներու մէջ, իրենց նորածինները գրկած, ապա՝ գանոնք յանձնելու օրհնութեանը խորանին, ուրկէ կը ծագի Արդարութեան Արեգակը: Յետոյ, նոյն խորանին մոմի լոյսն բոցավառելու խորոյզը եկեղեցւոյ շրջափակին մէջ՝ իբրեւ հաւատարմութիւն մեր հայրերուն հիմնած աւանդութեան, որով միայն կարելի է լուսաւորել, ջերմացնել հայուն օճախը:

Այսօր տօնական այս միջնորդին մէջ, գինուած հաւատքին գէնքով, նաեւ լուսավառ լապտերներով, զարդարուն մոմակալներով, իւրաքանչիւր հայ ընտանիքին մէջ նոր լոյս մը պիտի ծագի, նոր խորհուրդ մը պիտի լսուի: Մեր աչքերն ու ականջները պահել մը պիտի հեռացնեն մեր օրերուն ստեղծուած քանդիչ երեւոյթներէն՝ կեղծոնանալով միայն հայտնաբերած ձայներու վրայ, որպէսզի կարենանք գալիք սերունդներուն ներշնչել մեր ստացած լուսաւոր երգերը՝ հայ ժողովուրդի վարքին ու փառքին վերելքին ի խնդիր:

ՀԱՆՆԵՂՈՒՄՏ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ ՆԵՐ՝ ԿՐԹՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայաստանի գիտութեան եւ կրթութեան նախարար Լեւոն Մկրտչեան «Նոյնան Տապան» լրատու գործակալութեան յայտնած է, թէ նախարարութեան մէջ տեղի ունեցած են կառուցուածքային եւ քառալից փոփոխութիւններ: Ան ըսած է, թէ նախարարութեան անձնակազմէն աշխատանքէ ազատ կացուցուած են 17 պաշտօնեաներ, փոխ նախարարներուն թիւը չորսի փոխարէն նուազած է երկուի, իսկ կարգ մը վարչութիւններու մէջ տեղի ունեցած է աշխատանքային ծիրի ընդլայնում:

Գիտութեան վարչութիւնը պիտի ունենայ երկու՝ գիտութեան եւ դիտամասնակ վարժական մարդուծի պատրաստութեան բաժիններ, Արմէն Թուզնեանի գլխաւորութեամբ: Անփոփոխ մնացած են նախկին կրթութեան վարչութեան երկու վարչութիւնները միացած են եւ վերածուած մէկի՝ համապատասխան բաժիններով, իսկ վարչութեան պետ նշանակուած է Ռուբէն Գասպարեան:

ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՌԵՇԱԳՐՈՒԹԵԱՆ

«Ազգակ»-ի մէջ ազգային կամ առնչական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումի գնագիրը ընթեռնի գիրով (հաստատութեանց պարագայի)՝ նախընտրաբար պաշտօնակա թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազգակ»-ի ծանուցումներու գրասենեակը:

ՀԱՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՏ ԸՆԴԴՈՒՄԱՆ ԸՆԹԱՅԻՆ

«ՄԱՐԴՈՒԹԻ ՊԱԿԱՍ, ՈՐԱԿԻ ԱՆԿՈՒՄ ԵՒ ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆ՝ ՄԵՐ ՄԵԾԱԳՈՅՆ ԹՇՆԱՄԻՆՆԵՐՆ ԵՆ»

ԸՍԱՆԻ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Կիրակի, 10 Փետրուարին, կէսօրուան ժամը 12:00ին, մեծ թիւով հայ համալսարանականներ կիրակիոյ կաթողիկոսութեան վեհարանի դահլիճին մէջ գրոյց - հանդիպում մը ունեցան Արամ Ա. կաթողիկոսին հետ: Իր խօսքին մէջ Արամ Ա. կաթողիկոս ընդհանուր գիծերու մէջ անդրադարձաւ հայ ժողովուրդին եւ յատկապէս երիտասարդութեան դիմաց ծառայող մարտահրաւէրներուն: Վեհակառին եւ համալսարանականներուն միջեւ գործը ընթացաւ յատկապէս երեք զիւաւոր բնագաւառներու շուրջ՝ համաշխարհայնացման հետ դէմ առ դէմ, հայ կեանքին մասնակցութեան անհրաժեշտութիւնը եւ եկեղեցական, ազգային կրթական ու մշակութային կեանքի վերատեսութիւնն ու վերանորոգութիւնը:

Վեհակառը համալսարանականներուն ներկայացուց համաշխարհայնացման երեւոյթը, որ պատմութեան մէջ արմատներ ունենալով հանդերձ, մեծ թափ ստացած է ներկայ ժամանակներուն՝ շնորհիւ արհեստագիտութեան արագ զարգացումին: Ան նշեց, թէ կարելի չէ հեռու մնալ անկէ եւ ըստ հնարաւորին պէտք է օգտագործել անոր ընձեռած լայն կարելիութիւնները:

Ապա խօսելով հայ իրականութեան մասին՝ վեհափառը անդրադարձաւ երիտասարդութեան մէջ ըոյն դրած անտարբերութեան, որ զինք հեռու կը պահէ եկեղեցական կեանքէն: «Անտարբերութիւնը վտանգ մըն է մեր շրջապատին, մեր արժէքներուն եւ մեր ինքնութեան: Իբրեւ երիտասարդներ՝ այսօրուան աշխարհին մէջ ներկայութիւն պէտք է դառնանք», ըսաւ Արամ Ա.:

Արամ Ա. կաթողիկոս խօսեցաւ ազգային կեանքի

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՉԻ ԿԱՐՈՂ ՉՄՏԱՀՈԳՈՒԵԼ

«Վերջերս ՀՀ ՇՄՄ-ի մամուլի էջերում աշխուժորեն քննարկում է իմ մի արտայայտութիւնն այն կապակցութեամբ, որ Հայաստանը տարածքով փոքր երկիր լինելով կարիք ունի իր պաշտպանութիւնը կազմակերպել համաժողովրդային սկզբունքի վրայ: Ի՞նչ պէտք է միշտ, նրանք իմ խօսքերը ներկայացնում են բնագրից կտրուած: Եւ դա արւում է իբր թէ Վրաստանի հետ յարաբերութիւնները չկատարուած են: Նման հրապարակումներին կարող եմ պատասխանել հետեւեալը: Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, հայ ժողովրդի և Հայ կոմունիստ պետութեան շահերի վէջ կարեւորագոյն տեղ է զբաղեցնում խաղաղութեան պահպանումը: Վրաստանի հետ դրական յարաբերութիւնները ճոյնպէս մտնում են մեր ազգային շահերի մէջ: Սակայն միշտ չէ, որ կարող ենք վստահ լինել, որ Վրաստանի հետ սահմանը չի դառնալ մեզ համար ճակատ: «Ի հակեք, վրացիներին հետ խնդիր ունենք: Սակայն Վրաստանը վարուող իր քաղաքականութեամբ կարող է դառնալ Թուրքիայի եւ Ազրպէյճանի կցորդը, քանի որ սեփական իր անվտանգութեան ապահովումը անբաբայն կապում է այդ երկրներին, յատկապէս Թուրքիայի հետ: Մեզ չի կարող չմտահոգել, որ ամէն ինչ արւում է Վրաստանից ուսուսկան խորհրդակցութիւնները դուրս բերելու եւ ընդհանրապէս բրքակցւող տեղակայելու համար: «Չնայած բոլոր այն դրակն տեղաշարժերին, որ կապուած են եւրոպական հաղորդակցական ծրագրերի հետ եւ նախատեսւմ են նաեւ հայ-թրքական սահմանի բացումը, Թուրքիան իր խղճուկ տնտեսութիւնը

նից պատրաստ է տասնեակ միլիոնաւոր տոյրանքը պոկել կառուցելու: Հայաստանը շրջանցող կարու-Ախալքալաք երկաթուղին, ու երբ այս հարցում ստանում է Վրաստանի աջակցութիւնը, մենք չենք կարող դրանով չմտահոգուել: Հայաստանը նպատակ չունի իր սահմանները վերածել նակատի: Անշուշտ, Վրաստանն էլ անկախ պետութիւն լինելով՝ իր քաղաքականութիւնը պիտի չորոշի Երեւանում: Բայց նմանակէտ ընդունելի չէ, որ այդ քաղաքականութիւնը որոշուի Անգարայում: «Երբ ՀՀ ՇՄՄ-ի մամուլը համեմատութիւններ է անում Հայաստանի Առաջին Հանրապետութեան տարիներին հայ-վրացական յարաբերութիւնների հետ, ապա պետք է գիտեցնանք, որ Հայաստանը չէր այն ժամանակ իր համար բըճամուկներ ստեղծում, այլ՝ հարեւանների վերաբերմունքը հայ ժողովրդի նկատմամբ: Ի՞նչ պիտի անէր առաջին հանրապետութիւնը Վրաստանի հետ յարաբերութիւնները լաւացնելու համար՝ Լոռիի գիշէ՛ր. այն ժամանակ դա էր Վրաստանի պահանջը: «Եթէ այսօր Լոռին եւ Չանգեզումը Հայաստանի կազմում են եւ այս երկիրը որպէս պետութիւն գոյութիւն ունի, ապա դա առաջին հանրապետութեան առաջնորդների շնորհիւ է, այլ ոչ թէ «Ղարաբաղ» կոմիտեի, այսպէս արձագանգեց Դաշնակցութեան եւ հայ-վրացական յարաբերութիւնների վերաբերեալ ՀՀ ՇՄՄ-ի մամուլում վերջերս յայտնուած հրապարակումներին Վահան Յովհաննիսեանը:

«Եթէ այսօր Լոռին եւ Չանգեզումը Հայաստանի կազմում են եւ այս երկիրը որպէս պետութիւն գոյութիւն ունի, ապա դա առաջին հանրապետութեան առաջնորդների շնորհիւ է, այլ ոչ թէ «Ղարաբաղ» կոմիտեի, այսպէս արձագանգեց Դաշնակցութեան եւ հայ-վրացական յարաբերութիւնների վերաբերեալ ՀՀ ՇՄՄ-ի մամուլում վերջերս յայտնուած հրապարակումներին Վահան Յովհաննիսեանը:

«ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ»

ՀԱՅՏԱՐ ԱԼԻԵԸ ԽՈՒՍԱՓԵՑ ՏԻՔ ԳԵՅՆԻԻ ԵՒ ՌԻՉԸՐՏ ԱՐՄԻԹԱԾԻ ՇԵՏ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՑ

ԻՍԿ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԴԺԳՈՂ Է ԱԼԻԵԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԻՑ

«Մեր արտաքին քաղաքականութեան մէջ անհերքելակալային բաներ են կատարուում: Մէկը միւսին են հետեւում թրքական քաղաքական վերնախաւէի բարձրաստիճանի ներկայացուցիչների պայտանքները (թրքայեզու հանրապետութիւնների հետ կապերի պետական նախարար, Թուրքիայի խորհրդարանի նախագահ) Ազրպէյճան այն ժամանակ, երբ երկրի ղեկավարն արտերկրում է: Այժմ Հայտար Ալիեւը Միացեալ Նահանգներում է: Փոքր նախագահ Տիք Գէյնին եւ արտաքին գործոց նախարարի տեղադիր Ռիչըրտ Արմիթաճը ցանկութիւն են յայտնում նրան հանդիպելու, մինչդեռ Հայտար Ալիեւը Նիւ Եորքից Ուաշինգթոնի փոխարէն ուղեւորուում է Քլիվլենդ, Փետրուարի 6-ի համարում գրում է Պաքէի «Ջերբալ»-ը: «Հայտար Ալիեւը դադար է տալիս, որպէսզի դառնայ մեծ աշխարհաքաղաքական խաղի գոհը» յորւածում: Թողուածագիրը նկատուում է, որ Հ. Ալիեւի պետական այցը Մոսկուայի կապիտալի 10-ամեայ վարձակալութեան յանձնելը Ռուսաստանին մտահոգութիւններ են պատճառել Միացեալ Նահանգներին եւ Թուրքիային: «Ռուսաստանին, որպէս շրջանային տէրութեան, Միացեալ Նահանգները ճանաչում են, եւ կողմնակի են տրոնական Ասիայի, Մերձաւոր Արեւելքի ինդիաները կարգաւորելու ընթացքում Ուաշինգթոնը պատրաստակամ է խորհրդակցելու Մոսկուայի հետ, բայց ոչ այն աստիճանի, որ շրջանի նկատմամբ վերահսկող

ութեան թրքական ռազմաօդային ուժերի բոլոր գործողութիւնները: Բաւական է պարզապէս ծանուցանալ թրքական առաջարկներին, որոնք, որչպէս, առանց կառավարութեան թոյլտուութեան երբեք բարեկամական պետութեան հանձնարարութեան թրքական ռազմաօդային ուժերի ղեկավարը պարզ լինի, թէ՛ որքան է Թուրքիայի ղեկավարութիւնը դժգոհ Հ. Ալիեւի Ռուսաստան այցելութիւնը: «Ջերբալ»-ը, որ Ազրպէյճանի նախագահի պատասխան Ռուսաստանի վարչապետ Մ. Քասիմովի շուրջըրով յայտարարում է, որ պետութեան մերձաւոր դաշնակիցները իրանին, Իրաքին, Հիւսիսային Քորէային, քանզի վերջիններս հովանաւորում են միջազգային ահաբեկչութիւնը: Ի պատասխան Ռուսաստանի վարչապետ Մ. Քասիմովի շուրջըրով յայտարարում է, որ Մոսկուայի մտադիր չէ հրաժարուել իրանին զէնքեր վաճառելու պայմանագրերից: Այս պայմաններում, երբ Միացեալ Նահանգները, ըստ հուշագրի, ռազմական գործողութիւններով սպառնում են իրանին, Հայտար Ալիեւը նախարարութեան մէջ շեշտադրումները փոփոխութիւնը», գրում է «Ջերբալ»-ը: «Թուրքիայի նկատուում է, որ Թուրքիան ունի իր պատճառները դժգոհելու պաշտոնական Պաքէի գործողութիւններին: «Բանն այն է, որ, ի տարբերութիւն Միացեալ Նահանգների համաձայնագրի ստորագրումն արժատապէս հակասում է Անգարայի շահերին, քանի որ հնարաւորութիւն է տալիս Ռուսաստանին ամբողջութեամբ վեր-

ԶԱՐԳԱՅՈՒՄ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀՈՒՆՈՎ

Հաշուի առնելով հայ-իրանական փոխյարաբերութիւնների՝ 11 տարուան ընթացքում ձեռք բերուած մակարդակը՝ կարելի է միանշանակ ասել, որ մեր երկրների միջև բարեացակամ յարաբերութիւնների զարգացումն ու խորացումը ոչ միայն նպաստում են երկու հանրապետութիւնների հզօրացմանը, այլեւ մեծ դեր ունեն մեր շրջանում խաղաղութեան եւ կառուցութեան ապահովման գործում: Անկախութիւն ձեռք բերելու հէնց առաջին օրերից իրանը սկսեց աջակցել Հայաստանի անկախութեան ամրապնդման եւ հզօրացման գործընթացներին: Բաւական է յիշել, որ Հայաստանի համար ծանր ու բախտորոշ օրերին իրանի հետ կապող ճանապարհը մեր ժողովրդի համար դարձաւ կենսաբան ճանապարհ: Պատահական չէ, որ մինչ այսօր Պաքէն թեհրանին մեղադրում է Հայաստանի ամբողջական շրջափակման ծրագրի տապալման մէջ: Այսօր հայ-իրանական տնտեսական յարաբերութիւններն ընդգրկում են տարբեր ոլորտներ: Հիմնըւել է գործում են մի շարք հայ-իրանական համատեղ ձեռնարկութիւններ, իսկ տնտեսական կապերի համակարգման նպատակով ստեղծուել է հայ-իրանական յանձնաժողով, որի ուղարկութեան կենտրոնում են ոչ միայն երկկողմանի, այլեւ շրջանային համագործակցութեան հարցերը: «Իրան - Հայաստան» առեւտրական կալուածը Հայաստանում եւ իրանում պարբերաբար կազմակերպում է հայկական եւ իրանական ապրանքատեսականու ցուցահանդէս - վաճառքներ: Հայաստանի եւ իրանի փոխյարաբերութիւններն իրագործում են ոչ միայն երկկողմ, այլ նաեւ եռակողմ՝ Հայաստան - իրան - Ցունաստան շրջանակներում: Հայաստան, իրանի եւ Ցունաստանի իշխանութիւնները բազմիցս յայտարարել են, որ եռակողմ համագործակցութեանը կարող են միանալ նաեւ շրջանային այլ երկրներ: Այսօր օրակարգում են ոչ միայն մեր երկրների, այլեւ ամբողջ շրջանի համար ռազմավարական նշանակութիւն ունեցող մի շարք ծրագրեր: Հայաստան

նի նախագահ Ռ. Քոչարեանի՝ իրան կատարած պաշտօնական այցի ընթացքում Հայաստանի եւ իրանի միջև ստորագրուեցին մի շարք փաստաթղթեր, այդ թիւում՝ Իրան - Հայաստան կազատարի եւ Քաղաքանի փապուղու կառուցման պայմանագրերը: Եթէ առաջին պայմանագրի իրականացումը Հայաստանին հնարաւորութիւն կը տայ անխափան ներմուծել անհրաժեշտ ծաւալների կազ, իսկ ապագայում դառնալ տարանցիկ երկիր՝ իրանական ուժանիւթի՝ դէպի Վրաստան եւ Եւրոպա փոխադրման համար, ապա երկրորդ ծրագրի իրագործումը հնարաւորութիւն կը տայ 12 քիլոմետրով կրճատել իրան - Հայաստան բեռնափոխադրումների ճանապարհը: Վերջերս իրանը առաջարկել էր Հայաստանին՝ միանալ «Հիւսիս-Հարաւ» փոխադրամիջոցների միջանցքի նախագծի իրագործմանը, որը ռուսաստանեան Օլեան նաւահանգիստը կը կապի իրանի եւ Հնդկաստանի հետ: Հայաստանի մասնակցութիւնը նախատեսուում է նախագծի իրանական հատուածում: Արցախեան հիմնախնդրի կարգաւորման հարցում իրանը միշտ ցուցաբերել է հաւասարակշռուած մօտեցում: Թեհրանը բազմիցս նշել է, որ հայ -ազրպէյճանական հակամարտութիւնը պէտք է լուծուի միայն խաղաղ ճանապարհով: Հաշուի առնելով իրանի դերը շրջանում եւ նրա անկողմնակալ մօտեցումը Արցախեան հիմնախնդրի կարգաւորման գործում՝ ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահները որոշեցին թեհրանին տեղեկացնել բանակցային գործընթացի ընթացքին: Իրանի իսլամական յեղափոխութեան 23րդ տարեդարձի այս օրերին հերթական անգամ արժանագրում ենք, որ երկու երկրների միջև եղած յարաբերութիւնները գտնուում են առաւել չլքւմ եւ փոխգործակցութեան մակարդակի վրայ, ինչը դարձել է նաեւ շրջանում կալուանացնող գործօն:

ԷՂՈՒԱՐԴ ՂԱՉԱՐԵԱՆ
Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմնի անդամ

ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱԻՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՇԵՑ ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ԶԻՆՈՒԱԾ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Սեպտեմբերի 11-ի ահաբեկչութիւնից յետոյ, երբ Միացեալ Նահանգները պատերազմ յայտարարեցին «միջազգային ահաբեկչութեանը», Թուրքիայի քաղաքական շրջանակներն այդ առիթն օգտագործելով փորձեցին շրջանի քաղաքական զարգացումներին տալ Անգարայի ռազմավարական շահերին առաւել համապատասխան ուղղուածութիւն: Այդ շահերն ըմտնելու լոյթին պահանջում էին Հայաստանի եւ Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան վրայ կայցնել «ահաբեկչականի» պիտակներ: Թրքական այս միտումները, սակայն, բախուեցին Միացեալ Նահանգներին եւ եւրոպական առաջատար երկրների հակազդեցութեանը: Հարկ է սակայն նշել, որ Թուրքիան վերոյիշեալ միտումներն ի յայտ բերելիս առաջնորդուում է ոչ այնքան արեւմտեան պետութիւնների դրական արձագանգի ստանալու անկեղծաբար, որքան Հայաստանի ու Լեւնային Ղարաբաղի Հանրապետութեան վրայ յաւելեալ ճնշում գործադրելու եւ իր հակահակական դիրքորոշումն անշեղորէն շարունակելու մտադրութիւնների առնչութեամբ Ազրպէյճանին հերթական անգամ հաւաստելու քաղաքական հաշտարկներով: Ի դէպ, Թուրքիան հաշտարկներ է անում նաեւ քրտերի ու Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան նկատմամբ: Ընդ որում, սրանց հիմքում դրուած են ոչ թէ ճնշում գործադրելու, այլ անմիջկանօրէն միջազգային ահաբեկչական կազմակերպութիւնների ցուցակում Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան ընդգրկումն ապահովելու խնդիրը: Ի՞նչպէս, շնորհիւ Միացեալ Նահանգների եւ եւրոպական երկրների համապատասխան արձագանգի:

Երկրներից, վերոյիշեալ որոշումն անմիջկանօրէն պայմանաւորում է Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան որդեգրած նոր ռազմավարութիւնից բխող «քաղաքականացման» առաջադրանքով: Քանի որ զինուած գործունէութիւնը հակասում է քաղաքականացման պայմաններում քաղաքական օրինական գործունէութեան ծաւալելու առաջադրանքին բնոյթին, ուստի որոշումը Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան պարագայում կարելի է պայմանաւորել նաեւ մարտավարութեան փոփոխութեամբ: Ահա թէ ինչու Մեծ Թիւ Վիւն որոշման մասին հաղորդելիս, հարկ է համարում ընդգծել հետեւեալ ձեւակերպումը: «Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան անուան տակ Եւրոմիութեան եւ Թուրքիայի Հանրապետութեան սահմաններում անհրաժեշտ ենք գտնում դադարեցնել քաղաքական, կազմակերպչական եւ գործունէութիւնը որդեգրեցնելը: Սկսած այս պահից Եւրոմիութեան եւ Թուրքիայի սահմաններում իբրեւ Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան որեւէ գործունէութիւն չենք ծաւալելու»:

Յատկանշական է, որ Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան խնդրում, եթէ եւրոպական առաջատար պետութիւնները չեն արձագանգել Թուրքիային, ապա Միացեալ Նահանգներն ու Եւրոպայում նրա լիազոր ներկայացուցիչ Անգլիան անակնկալի են բերել թրքական իշխանութիւններին: Միանգամայն տհաճ այդ անակնկալն արտացոլուել է ամերիկեան եւ անգլիական կենտրոնական թերթերում, որոնք էլ վերջին շրջանում սկսել են յանձնարել հոլովը՝ «Քիւրտիստան» հասկացութիւնը: Թուրքիան դրա առնչութեամբ բողոքներ է ներկայացնում Միացեալ Նահանգներին ու Անգլիային, բայց՝ ապարդիւն: Սա նշանակում է, որ վերջիններս մտադիր են նրան դէմ շարունակել քրտական գործօնի խաղաղ կումները: Յատկապէս ներկայ փուլում, երբ Իրաքի դէմ ամերիկեան ռազմական գործողութիւնների հաւանականութիւնը հետզհետէ մեծանում է, իսկ ամերիկացիները դրանց իրականացումը պայմանաւորում են քրտական ուժերի դէպի Պաղատատ առաջխաղացումով:

Մայր ղէպը տուեալ դէպքում Իրաքեան Քիւրտիստանի ժողովրդավարական Կուսակցութեան նախագահ Սոսուտ Պարզանիի եւ իրաքեան Քիւրտիստանի Հայրենասէրների Միութեան նախագահ Ճալալ Թալապանիի ուժերի մասին է: Ինչ վերաբերում է Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան, ապա նա էլ վերականգնուած անաւարտագրութիւնը, որը «ժամանակաւորապէս» եւ «նախապայմանով» դադարեցնել իր զինուած պայքարը, որն ունի 18 տարուան վաղեմութիւն: Որոշումն ընդունել է Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան 5րդ հերթական համագումարը, իսկ դա Փետրուարի 6-ին ի լուր աշխարհի յայտնել ՄԵՏ Թիւ Վիւն: Քրտական այս հեռուստակայանը, որի հաղորդումները հեռարձակուում են եւրոպական տարբեր

«Շատ հնարաւոր է, որ Թուրք բարձրաստիճանի պաշտօնեաները, որոնց մասին յիշատակել ենք վերեւում, այս պահին նոյնպէս չեն փափաքում հանդիպում Ազրպէյճանի ղեկավարի հետ: Դ՞է՞ որ նրանց համար զօժուար չէր մի քանի օրով յետաձգել Պաքէ աջակցութիւնները: Սա կարող է նշանակել պաշտօնական Անգարայի կողմից Հ. Ալիեւի քաղաքականութեան հանդէպ դժգոհութեան արտայայտութիւն: Բացի այդ, չի բացառուում, որ թրքական կողմը այս այցելութիւններով փորձում է պարզել արդեօք կարող են Ազրպէյճանի ռազմավարութիւնում համաձայն երկրի արտաքին քաղաքականութեան փոփոխութեան շեշտադրումներին», եզրափակում է «Ջերբալ»-ը: Թ. Հ. «Ազգ»

«Սալահ»ը ընկնում է Թուրքիայի ազգային շահերից: Պէտք է նաեւ մտաւնալ, որ շահեր ունեն քրտական շրջանակները: Դրանք պահանջում են ոչ միայն Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան գոյութիւնը պահպանել, այլեւ նրա գործունէութիւնը ապահովելիս առաջնորդելու Եւրոմիութեան քաղաքական դաշտում ամրագրուելու առաջադրանքով: Թեբեւս դրա արդիւնաւէտ միջոցը գործունէութեան փոխադրումն է ռազմական հարթութիւնից քաղաքական հարթութիւն: Այս դէպքում Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան առջև կը բացուեն իր գործունէութիւնն օրինականացնելու հեռանկարներ, կը մեծանայ եւրոպական երկրների աջակցութեանն ապաւինելու հաւանականութիւնը, միաժամանակ զգալի կը սահմանափակուեն նրան ահաբեկչական կազմակերպութիւնն օրակերպութիւնը: Ինչ վերաբերում է Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան միջազգային ահաբեկչական կազմակերպութիւններին ցուցակում ընդգրկելու թրքական փորձերին, ապա դրանք քաղաքականացման պայմաններում կը դառնան անմտած: Արեւմտեան երկրները կը ձեռքազատուեն այդ փորձերին հակազդելու պարտաւորութիւնից, որը դրականօրէն կ'անդրադարձուայ ինչպէս Քիւրտիստանի Աշխատաւորական Կուսակցութեան գործունէութեան, այնպէս էլ քրտական հարցի վրայ: 3ԱԿՈՒ ՉԱՔՐԵԱՆ «Ազգ»

Միջազգային Քաղաքական Կեանք

ՆԱՓՈԼԵՈՆԸ ՌԱՄԱԼԼԱՅԻ ՍԵՄԻՆ. ԱՐԻԷԼ ՇԱՐՈՆԻ ՄԻՍԸ

«Պատերազմ եւ խաղաղութիւն» գործին մէջ թույլ թոյլ կը նկարագրէ Պորտուգալիայի ճակատամարտը, որուն ընթացքին նախնական քայլերը Մոսկուա: Այս ահաւոր ճակատամարտին ընթացքին, վէպին հերոսը կը փնտռէ ուսուցանող ուսուցիչը: Հրամանատարը՝ Քուլթուրը եւ զայն կը գտնէ նստած բլուրի մը կատարին, ուրկէ ան հանդարտօրէն կը հետեւի ճակատամարտի ընթացքին:

Զարմացած այս անփութութենէն՝ հերոսը կը դիմէ հրամանատարին: Քուլթուրը կը բացատրէ, որ ճակատամարտի այդ հանգրուանին ինք այլեւս ոչինչ ունի ընելիք: Ծակատամարտը բախում մըն է մարդկային վիթխարի երկու զանգուածներու միջեւ, եւ ակտիվ գնահատան է, որ պիտի յաղթէ:

Այս տեսարանը ինքնին անցնել չարաք, երբ այնքան ճշտօնով Արամիայի մէջ: Անոր գրասենեակը խաղաղ էր եւ պարտիստիկ ղեկավարը՝ հանգարտ: Երկար ժամանակ է ի վեր ինք այդքան խաղաղ չէի տեսած: Անոր ոտքերուն դողը առողջացած էր, իսկ յոգնատանջ հայեացքը բարեկամական էր: Յիշեցի մեր առաջին հանդիպումը, պաշտուած Պէյ-րուսի մէջ, Յունիս 1982ին: Զուտով տրամադրութեան մը մէջ էր, երբ, մեզ առաջնորդող զէպի պատուհանը եւ ցոյց տուաք քանի մը հարիւր մեթր անդին գտնուող իսրայէլեան հրասայլերը, որոնք իրենց թիղանօթները ուղղած էին դէպի պատուհանը:

Տասնեակ մը լրագրողներ է եւ խաղաղութեան կողմնակից «Կուշ Շալում» իսրայէլեան շարժումի հետեւորդներէն բաղկացած մեր պատուիրակութեան անդամները այն սպառնալից քայլերէն ստացան, որ Արամիայի տեղի տուած է: Եթէ անոնք ծանօթ ըլլային Պորտուգալիայի ճակատամարտի ուսուցանող Քուլթուրին, ապա հաւանաբար նաեւ մտածէին, որ Արամիայի գործը վերջացած է:

Իսրայէլեակազմատիրեան պատերազմը, այժմ 120 տարեկան, կը մտնենայ իր վճարող հանգրուաններէն մէկուն: Դիմադրութեան մէջ են վիթխարի երկու զանգուածները:

Երան կ'աշխատի հաստատ, վճարական եւ տրամաբանուած ձեռքով իրագործելու իր գործընթացը: Տասնամեակներէ ի վեր ան կը հաւատայ, որ պատմութիւնը ինք ծնած է իբրեւ իսկական Միտակամութիւն իրագործող, իբրեւ գործադրողը այն ծրագրին, որ կը նպատակաւորէ նուաճել ամբողջ «Էրէթի իսրայէլը», մաքրել զայն տեղական



Պաղեստինեան սուժուտի խորհրդակցիչ՝ Եսաւր Արամիայ:

ընկալութեան է եւ զայն ծածկել բնակեցման հրէական վայրերով:

Այս պատմական առաքելութեան հետապնդման մէջ Շարուն անգուլթ եւ անխնայ է: Արեան գետերը չեն ցնցեր զինք, իսկ մարդկային զոհերը թիւը, երկու կողմերէն, պարզապէս թուաբանաբար հաշիւ է: Ան կը շարժի գոյնը ստուգելու համար, կ'օգտագործէ հնարքներ եւ չի վարանիր ընել այն, ինչ որ ուսնց կողմէ պատմութեան կարգաւորող ռեժիմը կը նկատուի:

Ան դիտէ, թէ շատ քիչ մասնակի չունի, եւ թէ մնացած ժամանակը պէտք է օգտագործէ իբրեւ քաղաքական գործիք՝ ընկալելու համար պարտիստիկները: Իրագործելու համար ասիկա՝ ան պէտք է ոչնչացնէ անոնց ղեկավարութիւնը, պարտութեան մտտէն անոնց զինուած ուժերը եւ ջլատէ անոնց կամքը ու դիմադրողականութիւնը:

Նուազագոյնը բանտարկել պարտիստիկները իրարմէ եւ աշխարհէն կտրուած բազմաթիւ շրջաններու մէջ, իւրաքանչիւրը՝ շրջապատուած իսրայէլեան բնակեցման վայրերով, կողմնակի ճամբաներով եւ բանակային զորանոցներով: Այս տարածուն արդեամբներուն մէջ պարտիստիկներուն պիտի արտօնուի «բարդ իրենց ներքին հարցերով»: Եւ անոնք կ'ստանան արդեամբներուն մէջ կ'ապագայի հարցերով:

Առաւելագոյնը՝ օգտագործել որեւէ տարածք, արտաքսելու համար բոլոր պարտիստիկները, ներառեալ՝ անոնք, որոնք իսրայէլի քաղաքացի են: Երան ի վիճակի է հրահրելու պատերազմ մը, որ առիթ կու տայ այդ առաւելագոյն նպատակը իրագործելու: Ան միայն արհամարհանք ունի իր շուքը գտնուող այն մարդոց հանդէպ, որոնք անկարող են այսպիսի պատմական եզրերով մտածելու:

Պաղեստինցիները չեն կրնար մըքիլ յարձակող ուժին հետ, քայի մէկ մարզի՝ հարուստներու դիմանալու կարողակա-

նութեան մէջ: Պաղեստինեան ազգային ռազմավարութիւնը խտացւած է մէկ բառի մէջ՝ սուժուտ, տակալ: Պաղեստինցիք դիտեն, որ ասիկա պարտիստիկ ժողովուրդին եւ իւրաքանչիւր պարտիստիկին կեանք մահու կոնի է: Այս գիտակցութիւնը ծնունդ կու տայ դիմադրողականութեան ուժի մը, որ կ'ապագայէ Շարունի զօրավարները, ինչպէս որ ռուսներու դիմադրութիւնը ապագային նախնական գործարարները:

Բոլորէն աւելի Եսաւր Արամիայի խորհրդակցիչն է այս ուժին: Նոյնիսկ ղեկավարման իր ոճը քննադատող պաղեստինցիները՝ ընդհանրապէս արեւմտեան կրթութեան ստացած մտաւորականներ, գիտեն, որ գոյութեան նպատակը իրենց ղեկավար Արամիայի փոխարինող չկայ: Իսրայէլայի մէջ, իսրայէլեան հրասայլերուն դիմաց նստած մարդը կը մարմնաւորէ պաղեստինեան վճարակաւութիւնը՝ ամէն գոնով պաշտպանելու հայրենիքին մէջ իրենց ազգային գոյատեւելը:

Իսրայէլացի նախնական չի հասկնար պարտիստիկները, ինչպէս իսկական նախնական չհասկցաւ ռուսները: Երան եւ իր հետեւորդները կը հաւատան, որ Արամիայի մեկնուցած, անհարմար մըն է: Անոնք չեն հասկնար, որ յատկապէս այս կայութեան մէջ Արամիայի աւելի օգրաւոր եւ ազդեցիկ է, քան՝ երեքը:

Նախնական յաղթանակ արձանագրեց Պորտուգալիայի ճակատամարտին մէջ եւ իբրեւ յաղթական փառաւորապէս մուտք գործեց Մոսկուա: Սակայն քանի մը շարքի ետք նոյնիսկ Քուլթուրը վճարական պարտութեան մտտեց գայն: Նախնական ստիպուեցաւ փախուտ տալ իր ետին ձգելով խորատկուած բանակի մը մնացորդացը, ենթակայ՝ ցուրտի եւ անօթութեան պատճառով մահանալու վտանգին:

ՌԻՐԻ ԱՆԵՐԻ

«Ինքքընգէշընը Էբրէլ տ Թիպիլուց»

ԿԱՍՊԵԱՆ ԲԱՐԻՒՐՈՇ ԸԱԿԱԿԵՈՒԻ ՏԱԿ ԱՌՆԵԼՈՒ ԸԱՍԱՐ՝

ԹՈՒՐԻՔԻԱ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՄԵԾ ԵՂԲՕՐ ԴԵՐԸ ԿԸ ԽԱՂԱՅ

Կրնայ հանելուկի պէս թուիլ, սակայն հարցումին պատասխանը կրնայ հաճելի չըլլալ: «Ե՛րբ է, որ ծովը կը դադրի ծով ըլլալէ», ասիկա այն մեծ հանելուկն է, որ Խորհրդային Միութեան փլուզումէն ի վեր զբաղեցուցած է կասպեան աւազանի երկիրներուն դիւնազաններուն եւ զօրավարներուն միտքը: Վերջերս, անցնել Օգոստոսին, այդ հարցին գծով կարգ մը երկիրներու տեսակէտներուն յետնորդները սպառնացին ճակատագրական հարց ստեղծել: Հարցին կեդրոնը կը գտնուէին Թուրքիան եւ հինէն եկող իր մրցակցութիւնը զրաքի իրանին հետ:

Բանավէճին նիւթը, բնականաբար, պէտք է բացառուէ հասկնալ: Խորհրդային օրերուն կասպից ծովը շրջանային հասկացողութեամբ բաժնուած էր իրանի եւ Խորհրդային Միութեան միջև: Սակայն Ազրպէյճանի, Թուրքմենիստանի եւ Լազախիստանի անկախացումէն ետք, կասպից ծովուն ջուրերը եւ ընդատակեայ հարստութիւնները բաժնելու անընդունակ խնդիր մը վերածուած է, տրուած ըլլալով, որ այդ երեք երկիրները մաս կը կազմեն կասպից ծովու աւազանին: Եթէ կասպից ծով կը նկատուի, բաժանումը պէտք է ըլլայ Մովու Պայմանագրութեան օրէնքներուն համաձայն, ըստ որոնց, կասպից ծովը շրջապատող հինգ երկիրներէն իւրաքանչիւրը պէտք է ստանայ հաւասար բաժին մը անկէ եւ իւրաքանչիւրին բաժինին մէջ գոյութիւն ունեցող բնական հանքերը պէտք է նկատուին ազգային հարստութիւն:

Սակայն, եթէ կասպիցը լիճ կը նկատուի, ապա անոր բնական հարստութիւնը պէտք է միասնաբար օգտագործուի շրջապատող երկիրներուն կողմէ, եւ այս բաժանումը կը կոչուի «չահակցական մօտեցում»:

Զուտ իրաւական թուացող այս հարցը կը սրի այն պատճառով, որ այդ ծովուն կամ լիճին յատակը կայ 250 միլիառ տակաւ քարիւղի եւ նոյնքան բնական կազ: Հետեւաբար կարելու է իւրաքանչիւր երկիրին համար ճշդել, թէ ճիշդ որքան տարածութիւն է ճիշդ որքան բաժինը կը տրուի իրեն: Բնականաբար վէճը կ'ընթացնայ այն բաժիններուն համար, ուր ամէնէն մեծ հանքերը գոյութիւն ունին:

Մովեզերեայ հինգ երկիրները բոլորն ալ կը փորձեն այդ հարստութիւնը արտահանել քարիւղի եւ կազի թէ՛ օտար եւ թէ՛ տեղական ընկերութիւններուն օգուտին համար: Առաւել, շարք մը հեռաւոր երկիրներ, ինչպէս՝ Միացեալ Նահանգներն ու Թուրքիան, իրենց շահերը հետապնդելով կ'ուզեն այդ հարստութիւնը իրենց յատուկ միջոցներով եւ որոշ երկիրներու հետ պորտաբաշար արտահանել: Ուաշինկթընի եւ Անգարայի համար մեծ կարեւորութիւն ունի Պաքու-Թիֆլիս-ձէյզան քարիւղատարը: Անոնք կը ծրագրեն Ազրպէյճանին բաժին ինկած կասպեան քարիւղը ցամաք հանել Պաքուի մէջ, ուրկէ անիկա կը զրկուի դէպի հիւսիս-արեւմուտք, դէպի Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիս (Հայաստանի քովէն անցնելով), ապա բերել հարաւ, դէպի Թուրքիոյ միջերկրականեան ձէյզան նաւահանգիստը: Ամերիկացի եւ թուրք ռազմավարութեան մասնագէտները այսպիսով կը յուսան կապեր ստեղծել տարանցիկ երեք երկիրներուն միջեւ, նուազեցնել ռուսական ուժանիւթերէն Թուրքիոյ կախեալութիւնը, եւ այս օրերը ընելով՝ շրջանէ հետո պահել իրանեան եւ ռուսական քաղցութիւնը:

Քաղաքական հրամայականները բարեարեւելու համար հարցին տնտեսական կողմը գրեթէ անտեսուած է: Եւ հոս կը կայանայ բոլոր հարցը: Իբրեւ արդիւնք՝ ծրագրուած քարիւղատարը շատ հաւանաբար պիտի ըլլայ չափազանց ծախսալից, բացի թէ՛ քարիւղի գինները բարձրանան եւ այդպէս մնան, կամ՝ տարանցիկ այլ երկիրները (հաւանաբար նաեւ Միացեալ Նահանգներ) նիւթական մեծ յատկացում կատարեն այդ ծրագրի իրագործման համար: Սակայն, նկատի առած Վրաստանի եւ Ազրպէյճանի տնտեսական վատ վիճակը եւ Թուրքիոյ տնտեսական տագնապները, անհաւանական կը թուի տարանցիկ երկիրներուն կողմէ այդ գումարին գոյացումը:

Առաւել, քարիւղատարի ծրագիրը կը դիմադրուէ այլ դժուարութիւն մը: Ազրպէյճանի կասպեան ուժանիւթի արդիւնաբերութիւնը ստանձնած Ազրպէյճանի Միջազգային Գործող Ընկերակցութիւնը միակամ չէ հարցին նկատմամբ: Պի. Փի. Ամոքօ - ԱՐՔՕ» գլխաւորած ընկերակցութեան մաս կը կազմեն նաեւ ռուսական «Լուքոյլ» եւ «Էքստըն-Մոսկի»-ը, որոնք մեծապէս հետաքրքրուած են այլընտրանքային քարիւղատարներով: Անհրաժեշտ է նշել, որ վերջերս Լազախիստանի Քաշական քարիւղի հանքին մէջ 255-ն 40 միլիառ տակաւ քարիւղի յայտնաբերումը, որուն պեղումը ստանձնած է Ֆրանսական «Թոքալ-Ֆիլմա-Էլֆ» ընկերակցութիւնը, ինչպէս նաեւ Լազախիստանի թեմակից քարիւղի հանքերէն դէպի ռուսական սեւծովեան Նովորոսիսք նաւահանգիստ տանող կասպեան քարիւղատարի ընկերակցութեան յաջող իրագործումը գերազանցեցին Պաքու-Թիֆլիս-ձէյզան քարիւղատարը:

«Թոքալ - Ֆիլմա - Էլֆ» Քաշականի ծրագրի պատասխանատու Քրիսթոֆ տը Մարթերի վերջերս նշեց, որ Քաշականի քարիւղը հաւանաբար արեւմտեան շուկաները հասնի իրանի ճամբով: Միացեալ Նահանգներուն կողմէ իրանի վրայ դուռուց պատժամիջոցներուն մասին հարցումի մը պատասխանելով՝ տը Մարթերի ըսաւ, որ՝ «Թոքալ» 1995ին վերադարձաւ իրան՝ առանց վախճալու Ուաշինկթընի պատիժէն: Մենք հարցեր պիտի չարուցենք, սակայն մենք պիտի չարուսնակենք հետեւի եւրոպական եւ միջազգային օրէնքներուն:

ԻՐԱՆԵԱՆ ԽՈՒՍԱՆԱՌՈՒՄՆԵՐ

Միջազգային մրցակցութեան այս պատմութիւնը, ինչպէս նաեւ ամերիկեան եւ թուրքական յուսալից յայտարարութիւնները պատճառ դարձան Ֆիզիքական առաջին ընկերութիւն կասպեան հարստութիւններուն վրայ հակազդիւտ տարածելու նպատակով:

23 Յունիսին իրանեան պատերազմական երկու օդանաւեր թռիչք կատարեցին «Պի. Փի. - Ամոքօ - ԱՐՔՕ» ընկերութեան նաւերուն վրայէն, որոնք կը պեղէին կասպեան «Արագ - Արով - Շարկ» ջուրի տարածքին ընդերքը, որ ըստ Ազրպէյճանի, իրեն կը պատկանի: Իրան կ'ըսէ, թէ այդ շրջանը, որ Թեհրանին ծանօթ է իբրեւ «Ալպորոզ» հանքեր անուանով, մաս կը կազմէ իրեն պատկանող բաժինին: Նոյն օրը, երեւելուներուն, ազերիական ջուրերը եւ սպառնալից կրակ բանալ պեղումներ կատարող ազերիական նաւու մը վրայ, եթէ ան չհեռանայ շրջանէ: Ըստ տեղեկագիրներուն, իրանեան պատերազմական օդանաւեր ազերիական օդային սահմանները խախտած են երեք առիթներով:

Այդ դէպքերուն պատճառով յաջորդ օրը Պաքուն ազդարարեց իրանի դեպի անցնելու եւ պաշտօնական բողոք ուղղեց Թեհրանին: Իրանի դիւանագիտական խորհուրդի քարտուղար եւ Յիւսուփիական Պահակազուրի նախկին պետ Մոպսէն Ռեզայ դիտել տուաւ, որ՝ «150 տարի առաջ Ազրպէյճանը կը պատկանէր իրանին»:

Ինչպէս այդ մտանշուովը ահազանգ հնչեցուց Անգարայի մէջ: Թուրքիա երկար ատեն է ի վեր մօտիկ դաշնակից կը նկատուի Ազրպէյճանին նկատի ունենալով անոնց ցեղային մօտիկութիւնը, իսկ Պաքու - Թիֆլիս - ձէյզան քարիւղատարի ծրագրին լոյսին տակ անոնց յարաբերութիւնները ակտիւ սերտացած են վերջին տարիներուն: Այս բոլորին վրայ աւելցնելով իրանի հետ Թուրքիոյ դարաւոր մրցակցութիւնը, անկանկալ չէր, որ Թուրքիա շատ արագօրէն հակադրեց Ռեզայի սպառնալիքները: 26 Օգոստոսին քաղաքական կշիռը ունեցող Թուրքիոյ սպառնալիքները պետ Հիւսէյն Քիլիբօզուլու պաշտօնական այցելութիւն մը տուաւ Պաքու - անոր ընկերակցեցան թրքական 10 «ԷՖ. 16» օդանաւեր. քայլ մը, որ ինչպէս ազերիական «Ջերթլի» օրաթերթը գրեց, գոյնը շացման պատգամ ուղղեց Ազրպէյճանի թշնամիներուն:

Եւ իսկապէս այդպէս մեկնարանուեցաւ այդ քայլը Թեհրանի մէջ, որ պաշտօնական բացատրութիւն պահանջեց Թուրքիայէն: Անգարա պատասխանեց, որ այդ այցելութեան նպատակը պարզապէս Ազրպէյճանին անկախութիւնը շնորհակալուելն էր: Սակայն այս նոր հիմնուած ինքնիշխանութիւնը կը թուի ժարցական ըլլալ, նկատի առած, որ Քիլիբօզուլուի համամասն առիթով Ազրպէյճանի նախագահ Հայտար Ալի-Եւ յայտարարեց, թէ Թուրքիա եւ Ազրպէյճան «երկու երկիր եւ մէկ ազգ են»:

Այս դէպքը ցոյց տուաւ, թէ՛ որքան նուրբ է կասպից ծովուն հարցը: Երջանի միւս մեծ դերակատարը Ռուսիան է, որ վերջերս յայտարարեց, թէ չ'ուզեր կասպից ծովուն բաժանումը պահել խորհրդային շրջանի դրութեամբ: Իրան եւս մտանաւեց, թէ մինչ ռուսական բանակին թիւը կրճատուի կ'ենթարկուի ամէն տեղ, Մոսկուայի կասպեան ծովու լիճէն զրկուող միջոցներով, ապա բերել հարաւ, դէպի Թուրքիոյ միջերկրականեան ձէյզան նաւահանգիստը: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար:

Իրան եւս մտանաւեց, թէ մինչ ռուսական բանակին թիւը կրճատուի կ'ենթարկուի ամէն տեղ, Մոսկուայի կասպեան ծովու լիճէն զրկուող միջոցներով, ապա բերել հարաւ, դէպի Թուրքիոյ միջերկրականեան ձէյզան նաւահանգիստը: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար: Անոնք կը շարունակեն իրենց շահերը պաշտպանելու համար:

Հակառակ այն իրողութեան, որ Թուրքիա չի գտնուի կասպից ծովուն եզերքը, սակայն անոր դերը այս բանավէճին մէջ ճակատագրական է: Երկար ատեն է ի վեր Անգարայի մէջ շատեր կ'ուզեն, որ Թուրքիա իր ազդեցողութիւնը ընդլայնէ դէպի կեդրոնական Ասիոյ «Թրքական պետութիւնները»՝ նպատակ ունենալով ղեկավարել հսկայական այդ տարածութեան մէջ ապրող միլիոնավոր ժողովուրդները: Ըստ երեւոյթի, ազերիները շահաբեր նկատեցին կանչել իրենց Թուրք մեծ եղբայրը: Սակայն կասպից ծովուն հարցը տակաւին հեռու է որեւէ լուծումէ, մինչ առնչակից կողմերը կը փորձեն իրենց կարողութիւնները ցուցադրել:

ՃՈՐ ԿՈՐՎԵԹ

«Ուաշինկթընի Ռիփօրթ»

«ԱՉՂԱԿ»Ի ՄԵՋ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՄԱՐ

Բոլոր անոնք, որոնք կը փախաքին «Ազգային» մէջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատունը՝ ծանուցումներու բաժանումը հասցնեն հրատարակման թուականէն առնուազ օր մը առաջ, Մինչեւ Երեւանի ԲՈՒՅՈՒՄԻ ՓԱՄՐ 5:00: ՄԱՀԱՋԴՆԵՐԸ բացառութիւն են: Մահազդ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշերը, այնքան ատեն որ զայն հրատարակելու հնարաւորութիւն կայ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՆԱՓՈԼԻԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱՒՈՐՈՒՄԵՆ ԵՏԶ

ՀԱՅԵՐ՝ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՏԱԼԻՈՅ ԵՒ ՍԻԿԻԼԻՈՅ ՄԷՋ

- ԽՆԱՄԻԱԿԱՆ, ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ ԿԱՊԵՐ

Հայեր հարաւային Իտալիոյ եւ յառկա-
պէս Սիկիլիոյ ու Նափոլիի հետ յարա-
բերութիւն ունեցած են հին ժամա-
նակներէն, իսկ Նափոլիի թագաւորութեան
կազմաւորումէն ետք Նափոլիի, Սալեռնոյի,
Ամալֆիի, Ֆորենծայի, Մաթերայի, Ֆոստոլիի,
Թարանթոյի, Քաւա տէ՛ թիրրենիի, Նարտոյի
եւ Սիկիլիոյ գանազան քաղաքներու մէջ գաղ-
թօճախներ կազմաւորուած են: Դիւանագիտա-
կան, առեւտրական ու խնամիական կապեր
հաստատուած են նաեւ Կիլիկիոյ եւ հարաւա-
յին Իտալիոյ գահակալներուն ու իշխաններուն
միջեւ:

ՆԱՓՈԼԻԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Միջնադարեան Իտալիան տեղական ազ-
գագրական խմբաւորումներու, քաղաք-պե-
տութիւններու, իշխանութիւններու ու թագա-
ւորութիւններու բաժնուած էր: Գլխաւորներն
էին՝ Վենետիկ, Ֆլորանս, Միլան, Սալեռնոյ,
Սիենա, Պապական տիրոջները, իսկ Նափոլիի
թագաւորութիւնը կ'ընդգրկէր հարաւային
Իտալիան եւ Սիկիլիա կղզին:

Նորման ցեղերու առաջնորդներէն Սիկիլիոյ
Ռոժէ Ա. կոմսին ու անոր երրորդ կնոջ՝ Ատե-
լայտի գաւազը՝ Ռոժէ Բ. (ծնած՝ 22 Դեկտեմ-
բեր 1095ին), 28 Սեպտեմբեր 1105ին, ինը տա-
րեկանին յաջորդեց մեծ եղբոր՝ Միմոնի: Ան իր
մանկութիւնը անուց Սիկիլիոյ հիւսիս-արե-
ւելեան կողմերը գտնուող իրենց ընտանեկան
ղղեակին եւ Մեսինայի մէջ, իսկ 1112ին իր մայ-
րաքաղաքը հաստատեց Փալերմոյի մէջ:

Այդ օրերուն Սիկիլիա կղզին մեծամասնու-
թեամբ արաբներէ եւ յոյներէ բաղկացած
խառնուրդ բնակչութիւն ունէր, բայց իշխող
ուժը նորմաններն էին:

Նորման իր ուժին վստահած՝ Ռոժէ Բ.
մտաւ հարաւային Իտալիա, 1122ին իրեն են-
թարկեց Քալապրիան, 1127ին՝ Ափոլիան: Հո-
նորոս Բ. պապը 1128ին գայն Ափոլիոյ, Քա-
լապրիոյ եւ Սիկիլիոյ դուքս հռչակեց: 25 Դեկ-
տեմբեր 1130ին Փալերմոյի տաճարին մէջ ան
Սիկիլիոյ եւ հարաւային Իտալիոյ թագաւոր
օձնեցաւ:

Ռոժէ թագաւոր հզօր նաւատորմ պատ-
րաստեց, գրաւեց ներկայ Թունուզի մեծ մա-
սը, այնուհետեւ՝ Քորֆուլու եւ յունական ծո-
վափնեայ շրջաններ, առեւանգեց թեպէտք
արծաթադրոճ վարպետներ եւ իր հետ Սիկի-
լիա տարաւ, մայրաքաղաք Փալերմոյի մէջ աշ-
խատեցնելու համար: 1149ին ան հասաւ Վոսփո-
րի ափերը: Ռոժէ Բ.-ի օրով Սիկիլիա մշակու-
թեամբ զարգացաւ:



Նափոլիի թագաւորական պալատը:

թային կեդրոնի վերածուեցաւ: Ան մահացաւ
26 Փետրուար 1154ին, Փալերմոյի մէջ:

Ռոժէ Բ. իր գաւազին՝ Կոլիբեմօ Ա.-ի ձգեց
հզօր թագաւորութիւն մը: Անոր գաւազը՝
Կոլիբեմօ Բ. յարձակեցաւ Բիւզանդական
կայսրութեան վրայ, գրաւեց Մակեդոնիան,
Թեսալոնիկէն եւ հասաւ Պոլսոյ դուռերը, ուր
սակայն պարտուեցաւ. մահէն ետք (1189 Նո-
յեմբեր) անոր խորթ քրոջ ամուսինը՝ Հոնմէ-
կան Սրբազան կայսրութեան Հայնրիխ 2-
կայսր ձեռք ձգեց թագաւորութիւնը, որ այս-
պէսով գերմանացի Հոհենշթոֆերն կայսերա-
կան ընտանիքին անցաւ:

Հոհենշթոֆերն գահակալներ Սիկիլիոյ եւ հա-
րաւային Իտալիոյ թագաւորութիւնը իրենց
պահեցին մինչեւ 1260ական տարիները, երբ
կայսերական տան ժառանգորդներուն ուղիղ
գիծը վերջ գտաւ:

ՃԱՐԼ ՏԱՆՃՈՒԻ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԻՋԵՒ ԿԱՊԵՐ. ՀԱՅԵՐՈՒ ԳԱՂԹ ԴԵՊԻ ՀԱՐԱՒԱՅԻՆ ԻՏԱԼԻԱ ԵՒ ՍԻԿԻԼԻԱ

Հոհենշթոֆերններուն տկարացումը յարմար
առիթմ նկատելով՝ Յրանսայի Լուի Թ. թագա-
ւորին կրտսեր եղբայրը՝ Շարլ տ'Անժու
(ծնած՝ 1226ին եւ 1246ին Փրովանսի կոմս) Կղե-
մէս Ե. պապին հետ համաձայնութեան եկաւ
եւ պապական զօրքերու հետ դաշնակցած յար-
ձակեցաւ Նափոլիի ու Սիկիլիոյ վրայ: Պենե-
վենթոյի 1266ին թալիւրաքոյի 1268ի ճակա-
տամարտերուն ան պարտութեան մատնեց Հո-
հենշթոֆերններուն վերջին ներկայացուցիչնե-
րը՝ Մանֆրէտն ու Բոնրատինը, եւ ձեռք ձգեց
Նափոլիի ու Սիկիլիոյ թագաւորութիւնը: Շարլ
տ'Անժու (Իտալիէն՝ Քարլո տ'Անժիօ) իր իշ-
խանութիւնը տարածեց դէպի Պալեաններ եւ
1277ին Երուսաղէմի թագաւորութեան ժա-
ռանգորդ հռչակուեցաւ: Ան մայրաքաղաքը

Փալերմոյէն Նափոլի փոխադրեց եւ թագաւո-
րութեան ղեկավարութիւնը ֆրանսացի ազ-
նուականներու յանձնեց:

Այս ժամանակ, 1268ին Կիլիկիոյ թագաւոր
հռչակուեցաւ Հեթում Ա.-ի գաւազը՝ Լեւոն:
Անոր օրով երկիրը քաղաքական ճգնաժամի
մատնուած էր՝ Եգիպտոսի մեմլուքներուն եւ
իկոնիոյ սուլթանութեան սպառնալիքներուն
եւ ներխուժումներուն պատճառով, իսկ ներքե-
նապէս աւատատէր իշխանները պառակ-
տուած էին:

Երկրին սպառնացող վտանգը նկատի ունե-
նալով՝ Լեւոն թագաւոր մէկ կողմէ մոնկոյնե-
րուն հետ դաշինք կնքեց (որ սակայն մնաց ձե-
ւական), իսկ միւս կողմէ աշխատեցաւ Եւրո-
պայի օրուան հզօր գահակալին՝ Շարլ տ'Ան-
ժուի նեցուկը ապահովել: Այս նպատակով ալ
ան իր վասակ եւ վահրած եղբայրները իբրեւ
ղեկաւոր զրկեց Նափոլի՝ Շարլ թագաւորին
մօտ: Բանակցութիւններուն իբրեւ արդիւնք,
Կիլիկիոյ եւ իտալական քաղաքներուն հետ յա-
րաբերութիւնները աշխուժացան: Հայեր սերտ
յարաբերութիւն հաստատեցին Նափոլիի թա-
գաւորութեան հետ եւ կարեւոր թիւով հայեր
գացին հաստատուեցան Սիկիլիոյ գանազան
քաղաքներու, Նափոլիի, Սալեռնոյի եւ թագա-
ւորութեան տարբեր շրջաններու մէջ, իսկ Ֆո-
րենծայի մէջ արդէն կար հայ համայնք մը, ուր
անոնք 1196ին եկեղեցի կառուցեցին: Կ'են-
թաղուի, որ ԺԱ. դարէն սկսեալ հայեր եղած
են նաեւ Մաթերայի մէջ: 1278ին սկսեալ եւ յա-
ջորդող քանի մը տարիներուն Կիլիկիայէն
պաշտօնական պատուիրակութիւններ ու-
ղարկուեցան Սիկիլիա:

Նշենք, որ Սիկիլիոյ մէջ անցեալին, բիւզան-
դական տիրապետութեան ժամանակ հայկա-
կան ստուար գաղութ եղած է, ուր հայեր կու-
սակալի եւ գիւնուորական պատասխանատու
պաշտօններ ստանձնած են: Սիկիլիոյ հին գաղ-
թօճախները այսպէսով սկսան վերակենդանա-
նալ եւ Սիկիլիոյ ու Կիլիկիոյ միջեւ ծովային
առեւտուրը աշխուժացաւ: Այդ եւ յաջորդող
տարիներուն Սիկիլիոյ հաս-
նող հայերը Փալերմոյի, Մեսինայի, Թարանթի,
Թարանթի, Նոստրիա-
յի եւ Ակրիկենթոյի մէջ
կեդրոնացան:

ՍԻԿԻԼԻԱՅԻՆ ԵՐՈՒ ԱՊՍԱՄԲՈՒԹԻՒՆ

Նափոլիի թագաւորու-
թեան խաղաղ գոյապիճակը
խանգարուեցաւ, երբ սի-
կիլիացիք, Շարլ տ'Անժուի
մրցակից Արալոնի
(Սպանիոյ հիւսիս-արեւել-
եան երկրամաս) Փետրո Գ.
թագաւորին զօրակցու-
թիւնը ստանալէ ետք Աւագ Երկուշաբթի, 30
Մարտ 1282ին ապստամբութեան դրօշ պարգե-
ցին եւ Փալերմոյի Սանթօ Սիփրիթօ եկեղեցւոյ
շուրջ ջարդեցին ֆրանսական զօրքերը: Մարտ
30էն 31 Լուցոզո գիշերներուն ընթացքին փալեր-
մոցիք մօտաւորապէս երկու հազար ֆրանսա-
ցիներ սուրի քաշեցին: Ապստամբութիւնը տա-
րածուեցաւ Սիկիլիոյ ամբողջ տարածքին եւ
նոյն տարուան Օգոստոս 30ին արալոնցիք
Թարանթի ծովային ցամաք ելան:

Մրցակից կողմերուն միջեւ կռիւնները
սաստկացան. պապը, պապական Կուէլֆ կու-
սակցութիւնը եւ Յրանսայի Ֆիլիփ Գ. թագա-
ւոր զօրավիգ կանգնեցան Անժուի տան, իսկ
կայսերական Կիպլիին կուսակցութիւնը՝
Արալոնի տան:

ՍԱԼԵՆՈՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ

Այս ժամանակ հայկական ստուար հա-
մայնք մը կազմաւորուած էր Նափոլիէն հա-
րաւարեւելք, Սալեռնոյի ծոցին, Իոնո գետի
ափերուն տարածուող Սալեռնոյի մէջ: Հին
հռոմէական Սալեռնում բնակավայրը, կա-
ռուցուած՝ Ն. Ք. 197ին, անիկա Եւրոպայի
առաջնակարգ քաղաքներէն էր, ուր ԺԱ. դա-
րուն բժշկական համալսարան հաստատուած
էր (Եւրոպայի ամէնէն հինը) եւ ուր ուսանող-
ներ կային Եւրոպայէն, Ասիայէն եւ հիւսիսա-
յին Աֆրիկէէն: Աւանդութեան համաձայն,
քաղաքին Սան Մաթէօ տաճարին մէջ ամփոփ-
ուած են Սուրբ Մատթէոսի աճիւնները: Սալեռ-
նո նաեւ իտալական տարածուած ազգանուն
մըն է:

Պատերազմի այդ օրերուն, 1282ին, Սալեռ-
նո բուն կռիւնները թատերաբեմ դարձաւ,
մինչեւ որ սիկիլիացիք գրաւեցին քաղաքը:
Նոյն օրերուն՝ 1283ին յիշուած է Սալեռնո-
յի հայ համայնքին Հայոց Տունը: Նոյն տարին

Գրիգոր գրիչ հոն աղօթա-
գիրք մը ընդօրինակած է
«ընդ հովանեաւ Սուրբ
Մատթէոս առաքելոյն»,
որ հաւանաբար քաղաքին
մայր եկեղեցին է: Գրիչը
յիշած է նաեւ, որ ինք ըն-
դօրինակած է «Ի տունս
հայոց առ դրան Սրբոց
Կղմիք», որ հաւանաբար
Հայոց Տան մատրան
անունն է: Սալեռնոյի հա-
յերը այնուհետեւ ձեռնար-
կեցին Ս. Կարապետ եկե-
ղեցւոյ կառուցման: Եկե-
ղեցին յիշուած է 1287էն
սկսեալ: Եկեղեցւոյ շուրջ
վանական միաբանութիւն
ալ կազմուեցաւ:

ՍԻԿԻԼԻԱՅԻՆ ԱՐԱԿՈՆՅԻՆԵՐՈՒ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ

Արալոնցիներ եւ սիկիլիական ըմբոստ ու-
ժեր 1284 Յունիսին Նափոլիի ծոցին ջախջախե-
ցին Շարլ տ'Անժուի նաւատորմը: Շարլ սկսաւ
վերակազմել իր ուժերը՝ հակահարուած տա-
լու համար, բայց մինչ այդ՝ 7 Յունուար 1285ին
մահացաւ Ֆոնթայի մէջ:

Արալոնցիներուն ներխուժումին պատճա-
ռով Սիկիլիա Արալոնի տան անցաւ եւ Փետրո
Գ. միաժամանակ Արալոնի եւ Սիկիլիոյ թա-
գաւոր դարձաւ: Իսկ Շարլ տ'Անժուի գաւա-
զը՝ Շարլ Բ., որ 1284ին Նափոլիի նաւահան-
գիստին մէջ գերի ինկած էր իր թշնամիներուն
ձեռքը եւ բանտարկուած, հետագային, իբրեւ
համախոհութիւն ազատ արձակուեցաւ եւ Նա-
փոլիի թագաւոր հռչակուեցաւ: Նափոլիի թա-
գաւորութիւնը մնաց սահմանափակուած
իտալիոյ հարաւային մայր ցամաքին վրայ:

Փետրո Գ. մահացաւ 1285ին եւ անոր յաջոր-
դեց գաւազը՝ Ալֆոնսո Գ., որ մահացաւ
1291ին, իսկ անոր եղբայրը՝ Նամէս (Յակոբ)
Բ. գահակալեց մինչեւ մահ՝ 1295:

Նամէս Բ.-ի եղբայրը՝ Յրետերիք եղբոր մա-
հէն ետք Սիկիլիոյ խորհրդարանին կողմէ 11
Դեկտեմբեր 1295ին թագաւոր ընտրուեցաւ,
արգիլելու համար Նափոլիի մէջ կեդրոնացած
Շարլ Բ.-ի վերադարձը: 25 Մարտ 1296ին Յրե-
տերիք թագաւոր օձնեցաւ, ապա ան Նափոլիի
եւ պապին դէմ պատերազմի ձեռնարկեց, մին-
չեւ որ 31 Օգոստոս 1302ի Քալթրապելլոյի
ղաշինքով համաձայնութիւն գոյացաւ, որուն
հիմամբ Յրետերիք պիտի մնար Սիկիլիոյ թա-
գաւոր, բայց մահէն ետք կղզին Անժուի տան
պիտի վերադարձուէր:

ՀԱՅԵՐ ԹԱՐԱՆՈՅԻ ԵՒ ՖԱՍԻՈԼԻՒ ՄԷՋ

Շարլ Բ. տ'Անժու մահացաւ 5 Մայիս 1309ին
եւ իբրեւ Նափոլիի թագաւոր անոր յա-
ջորդեց գաւազը՝ Ռոպերթ տ'Անժու
(Իտալիէն՝ Ռոպերթօ տ'Անժիօ. ծնած՝
1278ին): Ան հիւսիսային Իտալիայէն եւ
հարաւային Յրանսայէն հողեր նուաճեց
եւ պարտութեան մատնեց Միլանոյի Վիս-
քոնթիները: Ռոպերթ սերտ յարաբերու-
թիւն հաստատեց Աւինիոն (հարաւային
Յրանսա) հաստատուած պապական
աթոռին հետ:

Ռոպերթ տ'Անժուի օրով Կիլիկիոյ եւ
Նափոլիի թագաւորութեան յարաբերու-
թիւնները կրկին աշխուժացան: Իսլամ
պետութիւններու եւ Յովհաննէս ԻԲ.
պապին ճնշումին տակ՝ Կիլիկիոյ Օշին
թագաւոր (1308էն 1320) Հոնմի եկեղեց-
ւոյ միանալու որոշում տուաւ եւ միա-
ժամանակ սերտ կապեր հաստատեց
Արեւմուտքին հետ: Այս ժամանակներէն
ալ հայեր գացին հաստատուեցան հա-
րաւարեւելեան Իտալիոյ Թարանթօ քաղաքին
մէջ:

Թարանթօ անցեալին փոքր կղզիի մը վրայ
կառուցուած բնակավայր եղած է եւ հետագա-
րուն ընդարձակուած է Թարանթոյի ծոցի ափե-
րուն: Նորման ցեղերու առաջնորդներէն Ռո-
պերթ Կիւբարտ տը Հոնմի 1063ին գրաւած էր
գայն եւ անոր գաւազը՝ Պոհեմոնտ Ա. Թա-
րանթոյի իշխան հռչակուած էր: Քաղաքը խա-
չակրական արշաւանքներու գլխաւոր մեկնա-
կէտերէն եղած էր եւ այնուհետեւ Նափոլիի
թագաւորութեան ենթակայ ամէնէն զօրաւոր
իշխանութիւնը դարձած էր:

Օշին թագաւոր, Թարանթոյի հզօր իշխա-
նութեան նեցուկը ապահովելու նպատակով
անոր իշխան Ֆիլիփի դստեր հետ ամուսնա-
ցաւ. խնամիական կապերը նպատեցին
առեւտրական եւ տնտեսական կապերու հաս-
տատման:



Սալեռնո

Նոյն ժամանակ հայեր գացին եւ բնակու-
թիւն հաստատեցին Ատրիականի ափերուն
գտնուող Ֆոստոլի քաղաքին մէջ. հայեր հոն
յիշուած են 1312էն սկսեալ:


ՍԱԼԵՆՈՅԻ ԵՒ ՔԱՒԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ

Սալեռնոյի հայ համայնքը արդէն բաւական
ստուարացած էր, իսկ Ս. Կարապետ եկեղեցին
վանական հաստատութեան վերածուած ըլլա-
լով անապատ կոչուեցաւ: Հոն հաստատուած
Անդրոնիկոս քահանայ 1327ին «Նարեկ» մը ըն-
դօրինակեց հետեւեալ մակագրութեամբ.
«Գրեալ ի մագաղաթի, յաշխարհս Ֆոսնկաց,
ի քաղաքս Սալեռն, ընդ հովանեաւ Սուրբ Կա-
րապետի, յԱնդրոնիկոս քահանայի, ի թիւին
հայոց ՋՂՁ»: Յովհաննէս ԻԲ. պապը 1328
Օգոստոսին Սուրբ Կարապետի հայ վանական-
ներուն հրովարտակ մը ուղղեց:

Մօտաւորապէս այս ժամանակ հայ հա-
մայնք մը կազմաւորուեցաւ նաեւ Սալեռնոյի
մօտակայ Քաւա տէ՛ թիրրենի քաղաքին մէջ:
Քաւա երկարորձաններէն բերիի դաշտերու
մէջ, գեղատեսիլ բլուրներով շրջապատուած
բնակավայր մըն է. անոր մօտակայ Քորփօ տի
Քաւա գիւղին մէջ կը գտնուի պենետիթեան-
ներուն Թրինիթա Տելա Քաւա վանքը, կա-
ռուցուած՝ 1011ին, հսկայ քարայրի մը մէջ,
Սուրբ Ալֆրեդոսի կողմէ: Քաւայի դիրքը եւ
պայմանները նկատի ունենալով հարաւային
Իտալիա հասնող հայ վանականներ հոն հա-
մախմբուեցան եւ քաղաքին մօտակայ լեռն
մը բարձունքին Անապատ Հայոց Սուրբ Նաչ
վանքը կառուցեցին:

ՍԻԿԻԼԻՈՅ ԵՒ ԿԻԼԻԿԻՈՅ ՄԻՋԵՒ ԱՌԵՏՐԱԿԱՆ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹԻՒՆ

Օշին թագաւոր, որ Թարանթոյի եւ հարա-
ւային Իտալիոյ հետ սերտ կապեր հաստատած
էր, մահացաւ 1320ին եւ անոր յաջորդեց տաս-



Սիկիլիա

նամեայ գաւազը՝ Լեւոն, որ շարունակեց հօր
լատինամոլ քաղաքականութիւնը, սպաննել
տուաւ իրեն ընդդիմացողները, եւ ամուսնա-
ցաւ Կիպրոսի Հենրիկոս Բ. թագաւորի ալ-
րիին՝ Սիկիլիոյ Յրետերիք թագաւորի դստեր՝
էլէոնարա Քոնսթանթինոյի հետ: Միաժամա-
նակ ան առեւտրական արտօնութիւններու
դաշինք կնքեց Սիկիլիոյ հետ:

Նշենք, որ Յրետերիք թագաւոր իր գաւա-
զը Փետրոս իրեն յաջորդ հռչակեց, եւ (հակա-
ռակ Քալթրապելլոյի համաձայնութեան)
արալոնցիներուն իշխանութիւնը Յրետերիքի
մահէն (25 Յունիս 1337) ետք ալ շարունակուե-
ցաւ Սիկիլիոյ վրայ: Այսպէսով, Սիկիլիոյ եւ
Կիլիկիոյ միջեւ առեւտրական համաձայնու-
թիւններն ու կապերը շարունակուեցան:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Ր Տ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Երջանային վարչություն, իրերայաջորդ իր նիստերուն, մանրամասնորէն քննելէ ետք միութեանս արթիթի իրավիճակն ու անոր դիմագրուած դժուարութիւնները, նշանակեց շրջանային արթիթի նոր յանձնախումբ, կազմուած հետեւեալ քույրերէն եւ եղբայրներէն.

- Քոյր Ռոպիկ Չոպանեան
 - Եղբայր Մհեր Քանոյեան
 - Եղբայր Գայուստ Մկրտիչեան
 - Եղբայր Գրիգոր Գոճակեօյեան
 - Եղբայր Յովհաննէս Այնթէպեան
 - Եղբայր Անդրանիկ Գոճակեօյեան
 - Եղբայր Մկո Օտապաշեան
- Մօտէն հետեւելու համար արթիթի բոլոր աշխատանքներուն, ինչպէս նաեւ լիբանանեան մակարդակով Հ.Մ.Ը.Մ.ը հասցնելու իր անցեալի փառքի օրերուն, որուն գործընթացը արդէն իսկ սկսած է փաստը՝ անցեալ ամսուան ընթացքին մեր մարզիկներուն արձանագրած յաջողութիւնները, հակառակ՝ միութեանս համեստ կարելիութիւններուն:

Առ այդ, կոչ կ'ուղղենք մեր արթիթաւեր երիտասարդութեան, ինչպէս նաեւ անցեալի փառքի օրեր կերտած մեր երէց մարզիկ-մարզիկուհիներուն, բոլորուելու նորակազմ յանձնախումբին շուրջ, իրականացրնելու համար միութեանս առաջադրանքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի
ՇՐՋԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

12 Փետրուար 2002
Պէյրութ

ՃԱՏՐԱԿ ՌԻԱՏԻ ՀԱՆԴԻՍԱՑԱԻ ԱՌԱՋԻՆ

Անցեալ շաբաթավերջին վերջ գտաւ արագ ճատրակի Լիբանանի խմբային ախոյեանութեան մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 16 խումբեր եւ 141 խաղացողներ:

Տիտղոսին տիրացաւ Ռիատի (Ա.), վեց կէտի առաւելութիւն ունենալով 2րդ դիրքը գրաւող Ֆրէրի վրայ: Հ.Մ.Ը.Մ. գրաւեց 5րդ դիրքը՝ 14 կէտով ետ մնալով Ռիատիէն:

Նշենք, թէ ախոյեանութեան, որ տեղի ունեցաւ շաբաթի Ռիատի ակումբին մէջ, կիրարկուեցաւ գոլիցերիական խաղաոճը, բաղկացած՝ ութ հանգրուանէ, իւրաքանչիւրը՝ 50 վայրկեան:

Ախոյեանութեան ընթացքին մրցումներուն հսկեց գլխաւոր իրաւարար էլի Հուլիան, իր կողքին ունենալով շատ մը օգնականներ, որոնց կարգին՝ Ժաք Պետրոսեան:

Պէտք է ըսել, որ ախոյեանութիւնը ակնկալուածէն շատ անելի գորտուր մթնոլորտի մը մէջ ընթացաւ, որովհետեւ շատ մը ակումբներ, գլխաւորաբար Ֆրէր եւ Ռիատի՝ իրենց կազմերը օժտած էին օտար խաղացողներով: Ֆրէր իր կազմին միացուցած էր երեք խաղացող (Գերմանիայէն), իսկ Ռիատի՝ թայալ Ջահիմը (Սուրիա), որոնք միջազգային դասուած վարկանքներ են:

Նշենք, թէ Հ.Մ.Ը.Մ.ի դասուած մարզիկներն էին՝ Լիբանանի ախոյեան Գնարիկ Մուրատեան, փոխ ախոյեան Սիւզան Մուրատեան եւ 20 տարեկանէն վար Լիբանանի ախոյեան Աբո Յովհաննէս:

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը, Բ. հանգրուանի մրցումներէն ետք.

	ԿԵՏ
1.- Ռիատի (Ա.)	40,5
2.- Ֆրէր	34,5
3.- Անսար	27,5
4.- Ահլի Սայտա	27
5.- Հ.Մ.Ը.Մ.	26,5
6.- Ռիատի (Բ.)	26
7.- Թանմիէ (Բ.)	24
8.- Լիբանանի բանակ	23,5
9.- Մաշարիդ	23
10.- Թանմիէ (Ա.)	23
11.- Ն. Ա. Ուժեր	22
12.- Նահատ Պար էլիաս (Ա.)	21,5
13.- Նահատ Պար էլիաս (Բ.)	20
14.- Ռիատի (Դ.)	19
15.- Նատուա Ըրպլա	19
16.- Հ.Կ.Մ.	15

ՍԱՔԱՐԹԻ ԵՐԿԱՐԱԶԳԵՑ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՅԻՐԻ ՀԵՏ

Այրի ֆութպոլի պագային խումբին մարզիչը՝ Միք Մաքարթի երկու տարիով երկարաձեց իր պայմանագրութիւնը, այսօր Ռուսիոյ դէմ տեղի ունենալիք ֆութպոլի միջազգային բարեկամական մրցումին նախորակին:

43 տարեկան Մաքարթի, որ իր խումբը հասցուցած էր 2002ի Մոնտիալին, մինչեւ 2004 պիտի մնայ Այրի մարզիչ:

«Ամէն ինչ դասաւորուած կարելի է սեպել եւ այժմէն իսկ կերտուանայ 2002ի Մոնտիալին վրայ: Մարզիկները այլեւ իրենք պիտե՞ք հանգստ կրնան պագ, որովհետեւ խումբը պիտի չլքեն», կ'ըսէ Մաքարթի, որուն պայմանագրութիւնը սկսելով կ'աւարտէր այս ամսուան սկիզբը:

Ետքը շար ծնած Մաքարթի, որ նախապէս Միլուոլի մարզիչն էր եւ իրեն մարզիկ մաս կազմած է Այրի ֆութպոլի պագային խումբին եւ Սելթիքի, 1996ին ստանձնեց իր պաշտօնը, փոխարինելով ձեռ Չարլթընը:

Թէեւ ան իր երկրին ֆութպոլի խումբը չկրցաւ հասցնել 1998ի Մոնտիալին եւ երբ 2000ի ֆութպոլի մրցաշարքին, սակայն 2002ի Մոնտիալի փուտով մրցումներուն (փէյնթի) պարտութեան մատնելէ ետք իրանք յաջողեցաւ կտրել ձափուկի եւ Հարաւային Բորնայի իր տունը:

Նշենք, թէ Այրի մաս կը կազմէ Ե. խմբակին. անկա իր դէմ պիտի ունենայ Քամերունը, Գերմանիան եւ Սելուական Արաբիան:

ՉՄԵՌՆԱՅԻՆ ՈՂԻՄՊԻԱԿԱՆ

ՆՈՐՎԵԿԻԱ՝ ԱՌԱՋԻՆ

Սոլթ Լէյք Սիթիի մէջ (Մ. Ն.) տեղի ունեցող 2002ի Չմեռնային Ողիմպիականի երէկուան մրցումներուն, Ռուսիա յաջողեցաւ իր առաջին ոսկի մետալը շահիլ, երբ սառույցի վրայ ցուցադրական մրցումներուն, Էլենա Պերեպլանայ - Անթոն Սիխարուլիտովէ կողմէ հանդիսացաւ առաջին, իր ետին ձգելով ձէյմի Սէյլ - Տաիտ Փելլիթի (Քանադա, 2րդ), եւ Ջիու Սիէն - Հոնկո Զիաո (Չինաստան) կողմէրը:

Նշենք, թէ նախքան մրցումը սկսիլը, Անթոն փորձերու ժամանակ բախեցաւ քանատացի ձէյմի, սակայն անոնք բարեբախտաբար անվնաս դուրս եկան:

Թղթակիցներու հետ հարցազրոյցին ընթացքին, Անթոն հարց ունեցաւ, որովհետեւ փոխան անգլերէնի, ան կ'ուզէր, որ հարցումները իրեն ուղղուէին ռուսերէնով: Անոր մարզիչը՝ Թամարա Մոսքովիսա, սակայն, ըսաւ, թէ թղթակիցներուն մեծամասնութիւնը ամերիկացի կամ քանատացի ըլլալուն պատճառով, ան ստիպուած չէ անգլերէնով պատասխանել:

Նոյն այս մրցումին, Հայաստանը ներկայացնող Մարիա Քրասնիկովան - Արտէմ Չինչով կողմէ չկրցաւ լաւ արդիւնք արձանագրել եւ «գրաւեց» 20րդ եւ վերջին դիրքը:

Տղոջ 30 քմ. դահուկարշաւի մրցումներուն, Արամ Հաճեան արձանագրեց 1 ժամ 24' 75" արդիւնք մը եւ 78 մասնակցողներուն մէջ գրաւեց 64րդ դիրքը:

Աղջկանց 15 քմ. դահուկարշաւի մրցումներուն, Մարգարիտա Նիկոլեան չկրցաւ շարունակել մրցումը՝ անհանգիստ ըլլալով:

Ստորեւ՝ մետալներուն դասաւորումը.



Էլենա եւ Անթոն, որոնք շահեցան ոսկի մետալը:

ոսկի մետալին տիրացողը:

Նշենք, թէ նախքան մրցումները սկսիլը, 78ի բարձրացաւ



Արմին Զոնկովեր

մետալներուն դասաւորումը.

	ՈՍԿԻ	ԱՐԾ.	ՊՐ.
1.- Նորվեգիա	3	3	0
2.- Մ. Նահանգներ	2	4	1
3.- Գերմանիա	2	3	1
4.- Ֆինլանտա	2	1	0
5.- Իտալիա	2	1	0
6.- Ռուսիա	1	2	2
7.- Աւստրիա	1	1	5
8.- Ֆրանսա	1	1	1
9.- Հոլանտա	1	1	0
10.- Էսթոնիա	1	0	1
10.- Չեխիա	1	0	1
12.- Սլովենիա	1	0	0
13.- Քանադա	0	1	1
14.- Չինաստան	0	0	1
14.- Չինաստան	0	0	1
14.- Ճափոն	0	0	1
14.- Լեհաստան	0	0	1
14.- Շուէտ	0	0	1

ԿՈՓԱՄԱՐՏ

ԹԱՅՍՈՆ - ԼՈՒԻՍ ԳԱԳԱԹԻ ԵՎ ԿԱՏՈՒՄԸ՝ ՊԵՅՐՈՒԹԻ՝ ՄԵՋ



Թայսոն իր փաստաբաններուն հետ կը փորձէ արտօնագիր մը ձեռք ձգել

Շատ մը քաղաքներ, որոնց կարգին՝ Պէյրութ, իրենց ամէն ճիգը ի գործ կը դնեն հիւրընկալելու համար կոփամարտի պատմութեան մէջ ամէնէն հաշակաւոր եւ ցարդ իր տեսակին մէջ եզակի ճակատումը, որ իրարու դէմ պիտի հանէ ծանր կշիռի հսկանք՝ ամերիկացի Մայք Թայսոնը եւ բրիտանացի Լիւիս Լուիսը:

Սկզբունքով այդ ճակատումը տեղի պիտի ունենար Լաս Վեկասի մէջ, Ապրիլ 6ին: Նեւատա նահանգի արթիթի մը յանձնախումբը, սակայն, մերժեց արտօնագիր տալ Թայսոնին, որովհետեւ ան Նիւ Եորքի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին կուր ըրած էր Լուիսի թիկնապահներուն հետ:

Թայսոնի մարզիչը՝ Շելի Ֆինքը կ'ըսէ, թէ ան կ'ուզէ իր ճակատումը կատարել Թեքսասի կամ Քալիֆորնիոյ մէջ, նայած, թէ ո՞ր նահանգը անոր արտօնագիր պիտի տայ:

Պէյրութի կողքին հետաքրքրուողներուն շարքին են՝ Քոփենհագեն, Լոս Անճելըս, Մատրիտ, Ամսթերտամ, Մանիլա եւ Շարաւային Ափրիկէ:

Անոնք բոլորն ալ հետաքրքրուած են այս ճակատումով, որովհետեւ այդ մէկը իրենց պիտի ապահովէ շուրջ 150 միլիոն տոլարի գումար մը:

Լիվերպոլի նմանօրինակ ճակատումներ կազմակերպող ձոն Հայլենտ, որ նախապէս Ողիմպիական մրցումներուն կոփամարտիկ եղած է, «Իոյթըրզ»-ի հետ իր կատարած մէկ հարցազրոյցին ընթացքին կ'ըսէ, թէ իր կարծիքով՝ յարմարագոյն քաղաքը Պէյրութն է:

Ան կ'ըսէ, թէ կապի մէջ մտած է Մոնթրէլը եւ շահարկումի ընկերութեան նախագահ Ժան Ապու Ռաշէտի հետ եւ կը յուսայ, որ 60 հազար հանդիսատես հիւրընկալող Պէյրութի Մարզական Աւանը յաջողութեամբ կրնայ այս ճակատումը ընդունիլ:

Ապու Ռաշէտ «Մրանս Փրէս»-ի կատարած իր յայտարարութեան մէջ կ'ըսէ, որ թէեւ մօտէն հետաքրքրուած ենք եւ խանդավառուած՝ այս հարցով, սակայն վերջնական պատասխան մը պիտի սպասենք Թայսոնի եւ Լուիսի մարզիչներէն, որ կրնայ գալ առաւելագոյնը երկուքէն երեք շաբաթ ետք:

ՊԱՍՔԵԹՊՈՆԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ (ՅԱՅՆԸԼ ՄԻՔՍ)

ԱՆԴՐԱՆԻԿ ՅԱՂԹԵՅ ՌԻԱՏԻ՝ 76 - 64

Լիբանանի պատեթպոլի Ա. դասակարգի ֆայնըլ պիքսի 5րդ հանգրուանին, Անդրանիկ յաջողեցաւ արձանագրել իր առաջին յաղթանակը, 76 - 64 արդիւնքով պարտութեան մատնելով Ռիատին:

Անդրանիկի մարզիկ Երուանը Աւազեան մրցումը չկրցաւ շարունակել եւ փոխարինեցաւ հիւանդանոց, որովհետեւ մրցումին ընթացքին ան գետին ինկաւ եւ ծանրորէն վիրաւորուեցաւ ձեռքէն:

Անդրանիկ ունեցաւ հաւաքական լաւ խաղարկութիւն եւ արժանացաւ յաղթանակին:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ԱՅՍՈՐ՝ ՅՐԱՆՍԱ - ՌՈՒՄԱՆԻԱ ԵՒ ԱՆԳՆԻԱ - ՀՈՂԱՆՏԱ ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Ֆութպոլի միջազգային բարեկամական մրցումի մը ընթացքին, երկ Պրետայի մէջ (Հոլանտա) Էրուատոր 1 - 0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց Թուրքիոյ դէմ: Մրցումին «որը» կուր նշանակեց Քարլոս Թեւոթի (64րդ):

Այսօրուան յայտագիրին վրայ են բարեկամական այլ մրցումներ, որոնց ընթացքին իրարու դէմ ճակատող խումբերը պիտի պատրաստուին 2002ի Մոնտիալին, որ տեղի պիտի ունենայ ձափուկի եւ Հարաւային Բորնայի մէջ:

«Սրտ տը Ֆրանս»-ի մէջ, աշխարհի եւ Եւրոպայի ախոյեան Ֆրանսս պիտի հիւրընկալէ Ռումանիան: «Ամսթերտամ Արենա»-ի մէջ, Անգլիա հիւրը պիտի ըլլայ Հոլանտայի:

Այլ մրցումներու ընթացքին, Իտալիա պիտի ճակատի Միացեալ Նահանգներու դէմ, Ուրուկուէ Հարաւային Բորնայի, Յունաստան՝ Շուէտի, իսկ Կալէն՝ Արժանիքի:

Վերջին մրցումին հետաքրքրական պիտի ըլլալ Բուլղարիա Քանիսիայի վերադարձը, որ վերջին անգամ Արժանիքի ֆութպոլի պագային խումբին շափուկը կրած էր Յուլիս 1996ին:

ԹԵՆԻՍ. «ՏԵՅՎԻՍ» ԲԱԺԱԿԻ ՄՐՅԱՀԱՐԸ

ՖՐԱՆՍԱ ԳՐԱԻԵՅ ՊԱՐԱԳՆՈՒԽԻ ԴԻՐՔԸ

Անցեալ շաբաթավերջին թենիսի «Տէյվիս» բաժակի մրցաշարքին Ա. հանգրուանին տեղի ունեցած մրցումներուն մեծագոյն յաղթանակ արձանագրող խումբերը եղան՝ Արժանիքի, Միացեալ Նահանգներ, Ջիմ-պպուոլէ, Հնդկաստան, Ուրուկուէ, Փարակուէ եւ Քոլումբիա, որոնք բոլորն ալ 5 - 0 արդիւնքով պարտութեան մատնեցին իրենց մրցակիցները:

զով պարտութեան մատնելէ ետք Հոլանտան գրաւեց պարագլուխի դիրքը: ●ՍՏՈՐԵՒ՝ դասակարգումը, որ կը հրապարակուի:

	ԿԵՏ
1.- Ֆրանսա (2րդ)	32,937
2.- Աւստրալիա (առաջին)	32,625
3.- Սպանիա (3րդ)	19,125
4.- Շուէտ (4րդ)	14,562
5.- Մ. Նահանգներ (5րդ)	8,875
6.- Ռուսիա (8րդ)	7,812
7.- Հոլանտա (7րդ)	7,312
8.- Պրագի (6րդ)	6,375
9.- Չեխիա (14րդ)	4,950
10.- Արժանիք (17րդ)	4,440

Ֆրանսա 3-2 արդիւնքով:

ԱՅՂԱՆԻՍՍԱԼ

ԹԱԼԵՊԱՆ
ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ
ԿԸ ՔՆՆԱՐԿԵՆ ԻՐԵՆՑ
ԱՆՁՆԱՏՈՒՌԹԵԱՆ ՀԱՐՅԸ

Աֆղան բարձրաստիճան պաշտօնատար մը երէկ յայտնած է, թէ թալեպան բարձրաստիճան աւելի քան 15 ղեկավարներ, որոնց մեծամասնութիւնը՝ նախկին նախարարներ, Գանտահարի մէջ աֆղան իշխանութիւններու հետ կապի մէջ կը գտնուին իրենց անձնատուութեան գծով:

Գանտահարի կառավարիչ Կուլ Աղա Շերպայի մէկ խորհրդակցանք՝ խալիտ Փաշթուն, յայտնած է, թէ կը փորձէ համոզել թալեպանները, որ «խաղաղօրէն եւ արժանապատուութեամբ անձնատուր ըլլան եւ անոնց կը խոստանանք, թէ վատ վերաբերմունք պիտի չունենանք իրենց հանդէպ»:

Ապահովութեան մարզի պաշտօնատարներ յոյս յայտնած են, որ թալեպան ղեկավարները պիտի կարենան տեղեկութիւն փոխանցել գտնելու համար թալեպաններու գերագոյն ղեկավար մուլլա Մոհամէտ Օմարը եւ թերեւս գտնելու հետքը՝ Ուսամա Պըն Լատէֆի:

Անցեալ Ուրբաթ օր, թալեպաններու արտաքին գործոց նախարար մուլլա Ուաքիլ Ահմէտ Մուրադաբիլ Գանտահարի մէջ պաշտօնատարներու անձնատուր եղած էր: Ան յանձնուած է ամերիկեան ուժերուն:

ԱՅՂԱՆ ԶԻՆԵԱՆՆԵՐ
ՎՐԱՍՏԱՆԻ ՄԵՋ

Թիֆլիսի մէջ ամերիկացի բարձրաստիճան դիւանագէտ մը Երկուշաբթի օր հրատարակուած հարցազրոյցի մը մէջ յայտնած է, թէ Պըն Լատէֆի հետ կապ ունեցող պիտի չընտրուին պաշտօնատուր եղած Վրաստանի Փանքիսի հովիտին մէջ, որ Չէչենիոյ սահմանակից է:

Ամերիկեան դեսպանատան գործավար Յիլիփ Ռեմլըր յայտնած է, թէ Փանքիսիի հովիտը Վրաստանի մէջ «ամէնէն ոճրագործ շրջանն է», զայն երկրին համար սպառնալիք նկատելով:

Ան ըսած է, թէ Ուաշինկթըն Վրաստանի պաշտպանութեան նախարարութեան հետ գործակցութեան ծրագիր մը ունի: «Մեր նպատակն է նախարարութեան ծիրէն ներս հակահարեկշական ուժեր ստեղծել», յայտնած է դիւանագէտը:

ՌՈՒՍԻԱ ՕԺԱՆՂԱԿՈՒԹԻՒՆ
ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ

Միւս կողմէ, Ռուսիա երէկ խոստացած է օժանդակել Աֆղանիստանի՝ ազգային նոր բանակի մը ստեղծումին համար, սակայն անիկա յայտնած է, թէ Քապուլ պիտուորական խորհրդականներ զրկելու ծրագիր չունի:

Մոսկուա այցելող աֆղան պաշտպանութեան նախարար Մոհամէտ Ֆահիմ մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ 20 տարուան տագնապներէ ետք, իր երկիրը կարիք ունի իր տնտեսութեան եւ ենթակառուցիչի վերակառուցման եւ չի կրնար գրեթէ անգոյ դրամը ծախսել նոր վէճերը ձեռք ձգելու համար:

Ռուսիոյ պաշտպանութեան նախարար Սերկէյ Իվանով յայտնած է, թէ Մոսկուա կրնայ մասնագէտներու օժանդակութիւն տրամադրել՝ ուժանիւթի, կառուցման, ականներէ ձեռքապատելու եւ այլ մարզերու մէջ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՔՈԼՈՍՊԻԱԿԱՆ ԵՒ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒՃԵՐ
ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐԵՆ ԹՄՐԵՑՈՒՑԻՉԻ ՄԵԾԱԳՈՅՆ
ՍԱՔՍԱՆԵՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵԿԸ

ՊՈԿՈՒԱ, 12 (ՌՈՅԹԸՐԸ)- Քոլոսոպիական ծովափը, ամերիկեան եզրապահ ուժերուն օժանդակութեամբ, երէկ յայտնաբերեց թմրեցուցիչի մեծ մաքսանենգութիւն մը, որ բոլոր ժամանակներու աշխարհի մեծագոյններէն մէկը կը նկատուի: 10 թոն բոքսիլի: Թմրեցուցիչը խաղաղական ուղիներով մէջ կը փոխադրուէր ձկնորսական նաւով մը: Ըստ մասնագէտներու՝ գրաւուած թմրեցուցիչը կը գնահատուի 300 միլիոն տոլարով: Երկու երկիրները գոհունակութիւն յայտնեցին: Պըն Լատէֆի ըսաւ, թէ օրինակի համար, Աֆղանիստանի մէջ ձեռք առնուած ներքին

մասին կամ գործողութեան հեղինակներուն գծով կը պահուի քար լուծիլին:

Այս լուրին հաղորդումէն քիչ առաջ, Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշ Կոլտակ Տան մէջ տուաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին ի միջի այլոց անդրադարձաւ նաեւ թմրեցուցիչի դէմ պայքարին անհրաժեշտութեան: Պուշ իր խօսքին մէջ ըսաւ, թէ թմրեցուցիչի մաքսանենգութեան եկամուտը կը գործածուի նաեւ ահաբեկչութեան համար, ինչ որ անընդունելի է Ուաշինկթընի համար: Պուշ ըսաւ, թէ օրինակի համար, Աֆղանիստանի մէջ ձեռք առնուած ներքին

նաւորները իրենց եկամուտը առաւելաբար կ'ապահովէին նմանօրինակ միջոցառումներով:

Պուշ 2003ի պիտեմբերի մէջ Նախագահի գումարներ տրամադրած է (3,8 միլիարտ տոլար) թմրեցուցիչի դէմ պայքարին, ինչպէս նաեւ թմրեցուցիչի գործածութեան դէմ քարոզարշաւի համար: Պուշ թմրեցուցիչի հայթայթման իբրեւ կեղծոններ նշեց լատին ամերիկեան երկիրները՝ Պոլիվիա, Պրագիլ, Քոլոմպիա, Էքուատոր, Փանամա, Փերու եւ Վենեսուելա, որոնց պետութիւններուն ամերիկեան օժանդակութիւնը պիտի աւելնայ, թափ տալու անոնց դէմ նաեւ ներքին պայքարին:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵ...

Շարունակուած Ա. Էջէն

Երբ կանգ չառաւ իսրայիլեան բանակին հաստատած անցարգելին: Բանակը յայտնեց նաեւ, թէ Հալիուի մէջ ձեռք առնուած Ֆաթիհի եւ Իսլամական Ժիհադի երկու հետեւորդներ: Իսկ Ռամալայի ներխուժումին տարբերակները անոր ձեռք առնուած Ֆաթիհի եւ Իսլամական Ժիհադի փոխադրող բոնագրաւուած նաւուն:

ՌԻՍԻԱԿԱՆ
ԿԸ ԲԱՆԱԿԵՆ
ԻՍՐԱՅԷԼԸ

Միացեալ Նահանգները պաշտօնատուր մտնեցում մը որդեգրեցին Արաֆատի հանդէպ՝ ընդունելով անոր երկարած ձեռք առնուած Ֆաթիհի եւ Իսլամական Ժիհադի փոխադրող բոնագրաւուած նաւուն:

Արտաքին գործոց նախարարութեան էն բարձրաստիճան պաշտօնատար մը յայտնեց, որ Արաֆատ նամակ մը ուղարկած է Քոլին Փուրլըրի՝ խոստանալով վերջ տալ պէնքի մաքսանենգումին եւ իսկի Իրանի հետ բոլոր կապերը: Նախարարութեան բանբերը՝ Ռիչըրտ Պուշըր ըսաւ, որ Ուաշինկթըն «դրահակութիւն յայտնելու համար, որովհետեւ պաշտօնատուր ղեկավարը արտօնած է երեք պաշտօնատարներու Երուսաղէմ այցելութիւնը՝ Շարունի հետ տեսակցութեան համար: Պաշտօնատուր աղբիւրը յայտնեց, որ Շարուն ըսած է. «Շարունակալ եմ, որ պատուիրակութիւնը ուղարկեցիր»: Շարունի բանբեր Արնոն Փերլման պնդեց, որ հաղորդակցութիւն տեղի չէ ունեցած: Իսկ այլ պաշտօնատարներ ըսին, որ պաշտօնատուր եւ քարոզչութեան մաս կը կապուէ այս լուրը:

պգալով կը դիմէ յարձակումներուն, որոնք չեն նպաստեր խաղաղութեան ձեռք առնելու:

Պուշըրը, սակայն, ոչինչ ըսաւ ամերիկացի պատուիրակ Անթոնի Չինիի Միջին Արեւելք վերադառնալու ծրագիրին մասին: Ան յայտնեց, որ Փուրլըրը հաղորդակցութիւն ունեցած է Արիստանիոյ եւ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարներուն հետ՝ համար կարգելու համար խաղաղութեան ձեռք առնելու:

Միւս կողմէ, Արաֆատ ըսաւ, որ Իսրայիլ պէնք մաքսանենգող նաւուն միջադէպը բեմադրած է քանդելու համար կապերը իր եւ Ուաշինկթընի միջեւ: Սակայն Արաֆատ որեւէ փաստ չներկայացուց հիմնաւորելու համար իր ամբաստանութիւնը Իսրայիլի դէմ: Ան պարզապէս ըսաւ, որ նաւուն հարցին մէջ Իսրայիլի ներտնտեսական փառաստան է թէ անիկա ուղարկած է մէկ արարքով հարուածել պաշտօնատուր եւ իշխանութիւնը, Իրանը եւ Հնդկաստանը:

● ԱՐԻՍՏԱՆԻՈՅ արտաքին գործոց նախարար Ճէք Սթոք եւ անոր գերմանացի պաշտօնակիցը՝ Եոշքա Ֆիշըրը յաջողաբար Միջին Արեւելք պիտի ժամանեն այսօր եւ վաղը: Անոնք անշատաբար տեսակցութիւններ պիտի ունենան Արաֆատի եւ Շարունի հետ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԽԱՉԲԱՌ-ԹԻԻ 5076
Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱԶԱՐԵԱՆ

Table with 11 columns and 11 rows for the 5076 lottery. Columns are numbered 1-11, rows 1-11. Some cells contain numbers.

- ՇՈՐԻՉՈՒԱԿԱՆ
1. Ծովեզերքի խիճ - Արտեւան:
2. Խաղ - Կրկն:
3. Տակաւ, հետզհետէ:
4. Պարտէզի քառանկիւն բաժանում - Եգիպտական դից:
5. Փոխանակ - Ուղղահայեաց ճիւղերով ծառ:
6. Մուգ կարմիր - Փրփր:
7. Ափրիկեան երկիր:
8. 451 թ. ճակատամարտին տեղանունը - Անորոշ զերանուն:
9. Սեւաշեայ - Արական օտար անուն:
10. Պողոսեանի - Յակոբ Բ. կաթողիկոսի ծննդավայրը:
11. Կրկնուած բաղաձայններ - Փոխադարձ զերանուն - Ստացական անուն:
ՈՒՂԱԿԱՅԵԱՑ
1. Հոգածութիւն - Հրէական գատիկ:
2. Ձէնքի թիրախ - Սուրբաշայ նախկին մամուլէն:
3. Եղէզնացուց - Գիւղաքաղաք (Հակ.):
4. Ողբի հակիթ - Գուրգէն՝ Մահարի երկերէն՝ «... Զրանցքը»:
5. Թրթուակ, ջրային ճէի:
6. Ուրդ - Լեզուով մը՝ այո՛:
7. Ծեծ, հարուած - Այր մարդիկ:
8. Ուշ, ապամամ - Յարաբերական զերանուն:
9. Գնալու խաղի տերեւ - Առանձին:
10. Մաքուր, անբիծ - Ծննդաբան (Հակ.):
11. Նշաւակ - Բազրատ Այվազեանցի երկերէն՝ «... Մախուեցաւ»:

Table with 11 columns and 11 rows for the 5075 lottery. Columns are numbered 1-11, rows 1-11. Some cells contain numbers.

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրուսի սակարանին մէջ օտար դրամահիշներու փակման սակագիցերը հետեւեալներն էին երէկ.

Table with 2 columns: Currency type and rate. Includes entries like 'Սուրիական թղթակի', 'Իրաքեան տինար', etc.

Table with 2 columns: Currency type and rate. Includes entries like 'Անգլիական մէկ ոսկի', 'Իրանեան մէկ ոսկի', etc.

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ

Table with 2 columns: Currency type and rate. Includes entries like 'Գիցի Ա. ճշդում Գիցի Բ. ճշդում', 'Ա. կարգի', etc.

ԿԸ ՓՆՏՈՒՄԻ ԵՐԳԻ ՄԸ
ՀԵՂԻՆԱԿԸ

Կը փնտռուին «Կուլեմ ինել» երգին խօսքերը գրող եւ երաժշտութիւնը յորինող անձերը: Այս երգը ի յայտ եկած, յորինուած է Հայաստան՝ 80ական թուականներու վերջերը կամ 90ականներուն սկիզբը, սփիւռքահայ ուսանող - երաժիշտի մը կողմէ: Հետեւեալն է երգին առաջին տունը.

«Կուլեմ ինել քեզ հետ մենակ
Ըո իրանց բռնած բարակ
Ու համբուրեմ արցունքները
Թուխ աչքերիդ...»

Երգին հեղինակը պիտի վարձատրուի հեղինակային իրաւունքներով: Իսկ ան, որ յսած է կամ կը ճանչնայ այս երգը յորինողները, կը խնդրուի դիմել՝

Photo and Printing Promoters,
Fax: 04/710849,
Ե-նամակ.- sarosero@hotmail.com

ԼՈՆՏՈՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Currency type and rate. Includes entries like 'Լոնտոնի սակարանին մէջ, դրամահիշներու փոխանակման սակը հետեւեալն էր երէկ կէսօրին.', 'Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը', etc.